4071

ՀՅՈՒՍԵՅԻՆ ՋԱՎԻԴ

# ՍԵՅԱՎՈՒՇ



894.362
Ջ - 39

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

894.362
Հ-39

19 NOV 2011

ՀՅՈՒՍԵՅԻՆ ՋԱՎԻԴ

# ՍԵՅԱՎՈՒՇ

Պիեսա հինգ գործողությամբ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

73.832

23.07.2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

23644-59

407

## Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ո Ղ Ն Ե Ր

ՔԵՅՔՅԱՎՈՒՍ—Արքա Քեյանի, բավական ծեր
ՍՅՈՒԴԱԲԵ — Դուստր Սուբիո Արքայի, Քեյքյավուսի կինը
ՌՅՈՒԲԱԲԵ — Սյուդաբեի ծծմայրը, սպիտակ մազերով
ՍԵՅԱՎՈՒՇ — Որդի Քեյքյավուսի (նախկին կնոջից), շատ յերիտասարդ
ՌՈՒՍՏԱՄ — Հռչակավոր ռազմիկ, Զալի որդի

| | |
|---|---|
| ՎԵԶԻՐ<br>ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ<br>ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ<br>ԹՈՒՍ<br>ԲԵՀՐԱՄ<br>ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐ | Պալատական ավագանի |

ԵՖՐԱՍՅԱԲ — Թուրանի խաքանը (կայսրը) միջին տարիքով
ԿԵՐՇԻՎԵԶ — Նրա յեղբայրը
ՖԻՐԵՆԿԻԶ — Եֆրասյաբի դուստրը
ՓԻՐԱՆ — Դիվանի պետ, ծերունի
ԹՈՄՈՒՆ — Կերշիվեզի թիկնապահը

Զինաստանի դեսպան, պարուհիներ, Քոսակ, սպա-

յակներ, նաժիշտներ, մարտիկներ, գյուղացիներ և ուրիշներ·

Վալի, խորհրդական, Ալթայ, Յալչըն, Նոր հարս, ներքինիներ, պալատական աղջիկներ, թիկնապահներ, զինվորներ և ապստամբներ։



## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Զաքիլիստանում զինվորական մարզանքի հրապարակ։ Վաղ առավոտ։ Ուժեղ յերաժշտություն։ Պարզ հագնված, խարտյաշ մազերով Սեյավուշը մի գյուղացի յերիտասարդի հետ իբրև մարզանք, սուսերամարտում է։ Մի կողմը՝ Զալի վորդի Ռուստամը յեվ այլ մարտիկներ, մյուս կողմը՝ լուրջ դեմքով, սպիտակ մազերով մի կին, գյուղացի աղջիկներ յեվ յերիտասարդներ դիտում են սուսերամարտը։ Սեյավուշը հաղթում է։ Ընդհանուր ծափահարություն։

**Ռուստամ**

*Աֆերի՛ն, Սեյավո՛ւշ։*

**Գյուղացիներ**

*Յաշա՛, բյուր յաշա՛։*

**Սեյավուշ**

*Վայել է կռվել քաջ տղամարդուն՝*
*Քաջ տղամարդկանց հրապարակում։*

**Ռուստամ**

*Ով ուզում է՝ գա։*

**Յերկրորդ յերիտասարդ**

*Հերթն իմն է հիմա։*

Սեյավուշ

Դու էլ յեկ, տեսնենք,
Ծփելու համար ինձ մի քաջ է պետք։

(Փայլում են սրերը։ Ընդհարվում են։ Սեյավուշը հաղթում է։ Ծափահարություն)

Գյուղացիներ

Յաշա՜։

Սեյավուշ

Յես չեմ խուսափում։
Ո՞վ է ցանկանում։

Ռուստամ

Միայն Ռուստամը, վորդի քաջ Զալի,
Կարող է լինել թայն այս դյուցազնի։

Սեյավուշ

Հերոսությունը քեզանից ուսա,
Յեթե պարտվել եմ, զղջում չեմ զգա։

Ռուստամ

Նվագեցեք անդադար,
Թող թմբուկը հաղթ թնդա։

Սեյավուշ

Ո՞վ է—թող պարզվի՝
Վորդին դյուցազնի։

(Ընդհարվում են։ Վո՛չ վոք չի պարտվում)



Ռուստամ

Վո՛չ յես, վո՛չ դու։
Քաջեր ահարկու,
Քաջի զավակ ենք,
Ուժով թե կռվում
Մենք հավասար ենք։

(Տրշապատից լսվում է զինվորական նվագ, Ռուստամը, ձեռք ճակատին տանելով, դիտում է)

Բեհրամ

Ովքե՞ր են դրանք։
Առաջից ահա
Գալիս է Թուսը։

Ռուստամ

Պարզ է, վոր այստեղ ղրկել է նրանց
Շահ Քեյքյավուսը։

(Թուսը մտնում է մի վաշտ ռազմիկների հետ)

Բոլորը

Քեյանի շահից Զալ ողլուն սալա՜մ։

Թուս

Սալա՜մ, Սեյավո՛ւշ, ահա քեզ ֆերման։

(Մի նամակ է տալիս)

Այս որից պետք է լքես գյուղական
Միջավայրն անշուք ու թշվառական,
Քեզ են սպասում սարայներ աննման։

### Սեյավուշ

(Նամակն աչքի անցկացնելով. Ռուստամին)

Վաղուց եմ վարժվել ազատ կյանքին ես,
Ծանըր չէ՞ գալու բաժանումն այսպես։

### Ռուստամ

Քանի շահ հայրդ է հրամայել մեզ,
Այգը չըբացված պիտի մեկնենք հեզ։

### Սեյավուշ

(Մոտենում է սպիտակ մազերով մի գեղջկուհու, համբուրում է ձեռքը)

Մնաս բարով, տատ, մայր իմ հարգելի,
Ինձ համար մորից մոտ ես ավելի։

### Կինը

(Նրա ճակատից համբուրելով)

Այս փուճ աշխարհում անունըդ վաղ-ուշ
Կը լուսափայլի, գառնուկ Սեյավուշ,
Քո դեմդ ամեն տեղ ծունկի կը չոքեն,
Բայց բռնակալին ու ճընշըվածին
Մեկտեղ մի՛ դնի նժարին, զգո՜ւյշ,
Ցեվ մի՛ մոռանա աղն ու հացն անուշ։
Ինչ յերկիր գնաս, հիշի՛ր մեզ, խըղճա,
Կոշտուկ ձեռքերը դու մի՛ մոռանա։

(Խորը հառաչելով)

Սարայները քեզ չգոռոզացնեն,
Ցեղի՛ր կարեկից Թշվառի դարդին,
Մի՛ հետեվի՛ր դու տներ ավերող



Քինոտ շահերին, ընչաքաղց, լափող
Մեղքացի՛ր կըրծքեր այրող ախերին։

(Ձայնը բարձրացնելով)

Մենք քեզ մեծացրինք, յեղի՛ր դու արդար,
Հայդե՜, իմ բալաս, բարի ճանապարհ։

(Աշխույժ նվագ: Հեռանում են)

### Ռուստամ

Փառքով ճանապարհ,
Բարի ճանապարհ։

### Գյուղացիներ

Փառքով ճանապարհ,
Բարի ճանապարհ։

(Հետեվում են նրանց)

### Վարագույր

# ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Քեյքյավուսի սարայում փառավոր մի սրահ։ Պարտեզ են նայում զանազան գույնի ապակիներով յեվ մետաքսյա վարագույրներով մեծ պատուհանները։ Ամեն կողմ խնդում է ուրախ նվագ։ Յերիտասարդ, թխադեմ, գրավիչ, կրքոտ նայվածքով Սյուդաբեն ստրուկների ուսի վրա դրված պատգարակին նստած մտնում է, հետը յերկու նաժիշտ։ Բաց պատուհանից դիտում է պարտեզում տեղի ունեցող խնճույքը։ Թավ բեխերով մի սպասյակ նայում է դռան առաջ կանգնած։

**Առաջին նաժիշտ**

(Յերիտասարդ ... պարտեզը ցույց տալով)

*Ի՜նչ փայլուն խնճույք, ի՜նչ շքեղ բայրամ,*
*Շահի սարայը պարում է թամամ։*

**Յերկրորդ նաժիշտ**

(Ավելի յերիտասարդ)

*Ափսո՜ս Սյուդաբե թագուհին նազլի,*
*Այս խինդի հանդեպ տխուր, թախծով լի։*

**Սյուդաբե**

*Յեթե աշխարհը խինդից է նվագ՝*
*Սիրո ամպերը կը ժպտա՞ն, ավա՜ղ։*



**Առաջին նաժիշտ**

*Ահա լցվեցին*
*Բաժակները սին։*

**Յերկրորդ նաժիշտ**

*Դարձյալ գինիներ մատռվակվեցին։*

Նվագ

**Սյուդաբե**

*Կենացն ըմպեցին իմ Սեյավուշին՝*
*Սիրուն, քաջ ռազմիկ, ջահել ու նրբին։*

**Առաջին նաժիշտ**

*Իր ճկունությամբ նման է վագրի։*

**Յերկրորդ նաժիշտ**

*Յեվ հերոս է նա։ Առյուծին կընկճի։*

**Սյուդաբե**

*Անզոր Աստըծուց հերոսը զորեղ՝*
*Միշտ արժանի է հարգանքի շքեղ։*

**Առաջին նաժիշտ**

*Տես, Սեյավո՜ւշը, տես, գալիս է քեզ։*

**Սյուդաբե**

*Դե հեռացեք դուք։*

(Սպասյակին ցույց տալով)

*Նա էլ հեռանա։*

(Յերեքն էլ հեռանում են։ Մտնում է խարտյաշ մազերով, գլուխը բաց Սեյավուշը։ Լիրիկական նվագ)

Սեյավուշ

*Սյուզաբե՜։*

Սյուզաբե

*Սեյավո՜ւշ։*

Սեյավուշ

*Ուղարկեց այստեղ ինձ իմ շահ մայրը։*
*Որ հրավիրեմ քեզ իր սարայը։*

Սյուզաբե

*Հետաքրքրակա՞ն է կյանքը սարայի։*

Սեյավուշ

*Հետաքրքրական ինչքան էլ լինի*
*Կյանքը սարայի,*
*Միշտ որորում են հոգիս ռազմիկի*
*Հուշերը գյուղի։*

Սյուզաբե

*Գեղջուկ կյանքը քեզ քա՞ղցր էր ավելի։*

Սեյավուշ

*Դեռ մանկությունից գյուղին վարժվեցի,*
*Ռուստամ Զալ ողլուց կրթություն առի,*
*Անահ լեռներում յեղնիկ վորսացի,*
*Չը սովորեցի սին խրախների։*

Սյուզաբե

(Բռնելով նրա ձեռից)

*Յերբ դու խոսում ես՝ իմ հոգին արտում*
*Հին ժամանակին է կարոտով հիշում,*



*Աչքերիս առաջ կենդանանում են*
*Լեռները Սուրիո, բարձրաբերձ, վսեմ։*

Սեյավուշ

(Ուզում է հեռանալ)

*Թագավոր հայրս քեզ է սպասում։*

Սյուզաբե

*Նա թող սպասի, դու կաց, չեմ ուզում։*
*Յերբ այնտեղ բոլոր աչքերը հայրատ*
*Նայում են, հառում, դմայլում վրադ՝*
*Խանդն այրում է ինձ։ Շրթունքներիս մեջ*
*Սիրտս սկսում է բաբախել անվերջ։*
*Յե՛կ, համբուրեմ քիչ…*

(Համբուրելով նրա գլուխը՝ սեղմում է իր կրծքին)

*Ներիր սիրույս հեզ։*

Սեյավուշ

*Թեև իմ մայրը մեռել է, չըկա,*
*Բայց դու ես յերկրորդ իմ մայրը հիմա,*
*Սիրտըս, սրտումըս տաքցավ քեզ վրա։*

Սյուզաբե

*Ինձ մի՛ կոչիր մայր, իմ անգին, իմ վեհ,*
*Այլ անվանիր ինձ միայն Սյուզաբե,*
*Մի՛ մոռնա՝ վոր մենք մեկ տարիք ունենք*
*Ինչպես ջուխտ յեղնիկ իրար նման ենք։*

(Ուզում է կրծքին համբուրել)

**Սեյավուշ**

*Թո՛ղ...*

**Սյուդաբե**

*Սպասի՛ր։*

**Սեյավուշ**

*Հեռանում եմ ես։*

(Գնում է)

**Սյուդաբե**

*Ի՞նչ գոռոզ ու վես։*

(Թագնված յեվ նրանց դիտող սպասյակը նկատում է վերջին տեսարանը յեվ հեռանում)

**Ռյուքաբե**

(Մտնում է անձկագին)

*Ի՞նչ փոթորիկ է հուզվում, բորբոքվում*
*Քո ջինջ աչքերում։*

**Սյուդաբե**

*Մի՛ հարցաքննի՛ր, թախիծըս մեծ է,*
*Մի՛ հարցաքննիր, ծծմայր Ռյուքաբե։*

**Ռյուքաբե**

*Դու Սուրխո կայսեր զավակը փայլուն*
*Ճիշտն՝ այս վիճակը քեզ չի վայելում։*

**Սյուդաբե**

*Ինչ վոր ասեմ յես՝ լեզուն չի կարող*
*Պատմել ֆուրտունյան իմ հոգին տանջող,*



*Ջահելությունըս զվարթ ու խնդուն*
*Միշտ մի զոզբելի հրեշ է հոշոտում.*
*Իմ սրտում գիլված անշեջ հուրերը*
*Չեն փայլեցնի հանգած հրդեհը։*
*Յես ցանկանում եմ բազուկներ պողպատ*
*Վոր բըղըքտեն ինձ, կտրատեն հատ հատ։*

**Ռյուքաբե**

*Ինչ վիշտ վոր ունես, պատմի՛ր, բաց արա,*
*Չէ՞ վոր ծծմայր եմ յեղել քեզ համար։*

**Սյուդաբե**

*Սեյավուշն իմ մեջ չթողեց հոգի։*

**Ռյուքաբե**

*Թե Քեյքյավուսը լսի, կը գժվի։*

**Սյուդաբե**

*Թե սարայը վողջ բռնկի, այրվի,*
*Յես նրա սիրուց չեմ հրաժարվի։*

(Նվագ)

**Ռյուքաբե**

*Ե՛լ բավական է խաղը մանկական,*
*Հավաքի՛ր դու քի՛չ, ամա՛ն, կիմանան։*

**Սյուդաբե**

*Ճակատագիրն անշուք ավերում է ինձ,*
*Իմ չսիրածները չոքում են սրտիս,*
*Ի՞նչ եմ սպասում իմ իսկ սիրածից։*

(Ուզում է հեռանալ սրահից)

Քեյքյավուս

(Դեմը յննելով)

*Իմ Սեյավուշի*
*Հրավերն ինչու*
*Մերժեցիր դու։*

Սյուդաբե

*Կարծես հիվանդ եմ, մի քիչ գամ ուշի...*

Քեյքյավուս

(Նրա աչքերը զննելով)

*Ի՞նչ է պատահել և ինչու համար*
*Համբուրում են այն ամպերը մռայլ*
*Աստղերը շողշող, բոլորքուն, հրե։*
*Գիտե՞ս, առանց քեզ խինդը լռում է։*
*Պարուհիները թող գան, պար դառնան,*
*Ալիքներ խինդի հորդեն ու յեռան։*

Սպասյակը ձեռքով նշան է անում մյուս սրահը։ Ներս են մտնում գույնզգույն շղարշներ հագած ձեռքերին վարդերով պարուհիներ։ Վարդերը նետում են Սյուդաբեյի վոտների տակ յեվ սկսում են պարել։ Նրանցից մի քանիսը նրան պաշտելու նման շարժումներով յերգում են յեվ շարունակում են պարել։ Դարձյալ առանց խոսքերի պար, հետո նվազուն նայվածքներով հեռանում են։ Նույն պահին սպասյակը բերում է մի նամակ յեվ հանձնում վեզիրին։

Քեյքյավուս

*Ի՞նչ է գրել*

Վեզիր

*Թրքական հոծ բանակը*



*Անցել է մեր սահմանը։*
*Նետվել առաջ անընդհատ,*
*Թալանել գյուղերը։*

Քեյքյավուս

(Ցնցվում է, վեր է կենում, ճչում)

*Քանի Իրանում Ռուստամի նման*
*Ունենք փեհլիվան*
*Ըմբռնելի չէ հանդգնությունը,*
*Յեվ ինչի՞ց է այս կատաղությունը։*

Ռուստամ

*Դուք անհոգ յեղե՛ք, իմ շահ, իմ արքա,*
*Անտեղի է ձեր վրդովմունքն հիմա։*
*Ռուստամն Իրանի թող մի կողմ մնա,*
*Մեկ Սեյավուշը պատասխան կըտա։*

Թուս

*Ապրես, Սեյավուշ, փորձանք չտեսնես,*
*Թշնամու հանդեպ անխնա լինես։*

Առաջին ռազմիկ

*Այս յերկրի փառքն է մեր Սեյավուշը,*
*Յեվ նախնյաց հուշը։*

Յերկրորդ ռազմիկ

*Քեյանի անհաղթ մեծ դյուցազունը։*

Սեյավուշ

*Մեր հայրենիքը վոտնակոխ անող*



23644-59
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗСФСР—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

*Ով վոր էլ լինի անմիտն այդ անհող,*
*Հավատա՛, իմ շահ, ժամանակ չանցած*
*Ծնկի կը չոքի քո ուժի դիմաց,*
*Յերկաթ դաստակներ մեր հայրենիքում,*
*Քիչ չեն բազուկներ և պողպատակուռ։*
*Անվեհեր, հաստատ, քաջ տղամարդիկ*
*Միթե պակաս են։*

**Քեյքյավուս**

(Զայրացած վեր է կենում)

*Հեռու մեզնից սին ահը,*
*Թող պատրաստվի բանակը,*
*Թող շողշողան սրերը,*
*Տեսնենք, ո՞վ է ուժեղը։*

**Աստղագուշակ**

(Ներս է մտնում յեվ առաջանում է դեպի ձախ: Սպասյակին)

*Փայլփլում են աչքերըդ լուռ,*
*Արդյոք կա՞ մի վորևէ լուր։*

**Սպասյակ**

*Կա մի սեր անլուր։*

**Աստղագուշակ**

*Ի՞նչ, ասա՛, ո՞վ—ու՞մ։*

**Սպասյակ**

*Մեր արքայորդուն եր պինդ համբուրում,*
*Աչքովըս տեսա, Սյուդաբեն նազլում։*



**Քեյքյավուս**

*Թրքական հոծ բանակը*
*Անցել է մեր սահմանը,*
*Նետվել առաջ անընդհատ,*
*Թալանել է գյուղերը։*

**Աստղագուշակ**

*Իմ շա՛հ, թողե՛ք խուճապը,*
*Աստղագուշակս, ձեր ճորտը,*
*Անցյալ գիշեր զննելով*
*Բոլոր աստղերն յերկնի մով,*
*Զգացի այս արշավում*
*Հաղթանակը վառ, փայլուն*
*Մերն է, մերը հաստատուն։*

**Սյուդաբե**

*Մենակ Զալ ողլին*
*Կը հաղթի Թուրքին։*

**Քեյքյավուս**

*Սեյավուշն ապա։*

**Սյուդաբե**

*Վո՛չ, այս անգամ նա*
*Կռիվ թող չգնա։*

**Քեյքյավուս**

*Ի՞նչու։*

**Սյուդաբե**

*Ազգական է նա.*

Չէ՞ դավաճանի,
Մայրը՝ Թուրանցի։

**Քեյքյավուս**

(Ձեռք կրծքին խփելով)

Իսկ հայրն՝ Իրանցի։
Թե վողջ աշխարհը մեզ դավաճանի,
Սեյավուշն յերբեք չի դավաճանի։

(Աջից դուրս է գնում)

**Աստղագուշակ**

(Սպասյակին)

Ուրեմն տեսա՞ր դու
Իրանի թագուհուն,
Վոր համբուրում եր
Սեյավուշին մեր։
Զգո՜ւյշ, հեռացի՛ր,

(Քսակով փող է տալիս)

Ստացի՛ր, լռի՛ր։

(Գնում է)

**Սպասյակ**

Տե՛ր իմ, լռում եմ։

(Վոսկիները ափում խաղացնելով, ուրախ քրքջում է)

Դարդերի դարման դո՛ւ վոսկի, վոսկի,
Քո ճիրաններից ո՞վ կը սողոսկի։



Գրպանըդ լցրու, աշխարհը քոնն է,
Շահին վերագրված ֆերմանը քոնն է։

(Քսակն է համբուրում)

Ահա փրկիչը, ահա Ահրիմանն
Աղբյուրն արցունքի, այգին խնդության,
Դևին դարձնում է հրեշտակից էլ սուրբ,
Իսկ վառ ցերեկը՝ գիշերից էլ մութ։

**Առաջին նաժիշտ**

Ա՜հ, դժբախտությո՜ւն...

**Սպասյակ**

Ի՞նչ է պատահում։

**Առաջին նաժիշտ**

Խելագարությունը շահ Քեյքյավուսի
Հասել է արդեն ծայր աստիճանի,
Սյուդաբեն գնաց և նա ոգտվեց,
Անմիջապես մեր ոդան սողոսկեց,
Նրա ճանկումն է նաժիշտը ջահել,
Քաշում է նրան անդունդը անել։

**Սպասյակ**

(Հեգնական ծիծաղով)

Միթե՞ մեր շահն է այդպես մի թշվառ,

(Թևից բռնելով)

Վողջ աղջըկերքը նրանն են, հիմա՛ր։

**Առաջին նաժիշտ**

(Վրդովված յետ է քաշվում)

*Գետինը անցնի շող Թագը նրա,*
*Յեվ յերեսին ել ժպիտ չշողա։*

(Ներսի դուռը նայելով)

*Ահա մեր արքան,*
*Փայլում են ահա*
*Աչքերը գազան։*
*Փրկի՛ր ինձ, ամա՜ն։*

**Սպասյակ**

(Կողքի վարագույրը ցույց տալով)

*Մտի՛ր, Թագնվիր մթնում ահալից։*

(Թագնվում է)

*Ո՞վ ձեռք կը քաշի քեզ սեվ մարալից։*

**Քեյքյավուս**

(Հարբած քայլերով վորոնելով յերկրորդ նաժիշտին, մտնում է)

*Մի գնա ... կա՜ց...*
*Մի փախչիր ... յե՛կ...*

(Սպասյակին)

*Չթողնես, զգո՜ւյշ...*

**Սպասյակ**

(Աղջկա առաջքը կտրելով՝ բռնում է)

*Յե՛կ, մի շփանա։*



**Քեյքյավուս**

*Այս կողմը նայի՛ր...*

**Երկրորդ նաժիշտ**

(Շահի առաջ ծնկի գալով)

*Ների՛ր ինձ, արքա,*
*Յես՝ մի յերեխա,*
*Չեմ հասել, դեռ խա՜կ։*

**Քեյքյավուս**

*Հոգիս հրճվում է կոկոնից Թաժա,*
*Ամեն առավոտ նազլու մի սոնա...*
*Մի ձագ աղավնի, արև՞ը վկա,*
*Իմ բաժինն է միշտ, դու մի՛ մոռանա։*

(Գրկում է նրան)

**Երկրորդ նաժիշտ**

(Նրա թևերի մեջ ցնցվելով)

*Յես չեմ ցանկանում, ինձ սպանեցեք,*
*Միայն մի՛ դիպչեք մարմնիս դյուրաբեկ։*

**Քեյքյավուս**

*Յես չեմ ցանկանում քեզ ցավացընել,*
*Ուզում եմ սիրել, համբուրել, շոյել։*

**Երկրորդ նաժիշտ**

*Յես չեմ ցանկանում արժանի լինել։*

**Քեյխյավուս**

*Թե չլսես ինձ՝ կը հոշոտեմ քեզ։*

(Դեպի ներս է խուժում)

**Սպասյակ**

(Սառը ծիծաղով)

*Սիրո՜ւն ընծա*
*Քո բախտն է սա,*
*Այլ յելք չկա։*

**Առաջին նաժիշտ**

(Դուրս գալով վարագույրի յետեվից՝ առաջանում է դեպի Քեյխյավուսը)

*Անամո՛թ, ստո՛ր։*

**Սպասյակ**

*Բերանըդ փակի՛ր, շահն է քո դիմաց,*
*Յեվ շահի հանդեպ ինչ գործ անիմաց։*

**Առաջին նաժիշտ**

*Ել բավական է, նա ամեն մի որ,*
*Գազանի նման կրքոտ ու ստոր,*
*Մի փափուկ սիրտ է հոշոտում վայրի։*
*Հինգ որ առաջ նա, արքան արնալի,*
*Ինձ հետ էլ այդպես վարվեց, անամոթ,*
*Իմ պարկեշտությունը վոտի տակ առավ,*
*Ձայներս խեղդվեց, մի տեղ չհասավ։*

**Սպասյակ**

*Դա մի նշան չէ՞ չկա յելք ուրիշ։*



**Առաջին նաժիշտ**

*Ցույց տուր ինձ յելքը, սպասյակ լպի՛րշ։*

**Սպասյակ**

(Անիմաստ ծիծաղով)

*Պրծավ քեյֆը մեր շահին՝*

(Ձեռք դնելով նրա կրծքին)

*Հերթը յեկավ շվաքին։*

**Առաջին նաժիշտ**

*Չհասկացա...*

**Սպասյակ**

*Շահից ավելցած նազանքի փոշին*
*Զարդը կը լինի իմ մահճիս ցրտին,*
*Յերկար չի տևի, կանցնի ֆուրտունան,*
*Յեվ այն աղջիկը, չքնաղ փարվանան*
*Կինը կդառնա մի գոմանատանի։*

**Առաջին նաժիշտ**

(Խիստ շփոթված)

*Հերիք է, լռի՛ր, շվա՛ք անզգա,*
*Չեմ ուզում արատ արատի վրա։*

(Ուզում է հեռանալ)

**Սպասյակ**

*Մի գնա...*

**Առաջին նաժիշտ**

*Մի՛ դիպչիր, բավ է այս խաղքությունը,*

*Յերկի՞նք է թռել արդարությունը։*

(Նույն պահին ներս է մտնում Սեյավուշը, մեջքին սուր, գլխին կիսաթագ, տեսնում է նրանց յեվ այլայլված դիտում)

**Սպասյակ**

(Մոտենում է աղջկան)

*Արդարությունը ... թռչուն ել լինի,*
*Բույն չի կառուցի սարայում շահի։*

(Արհամարհոտ ծիծաղով)

*Արդարությունը ... ծիծաղ—առասպել,*
*Վորից խնդում է հիմարն անընտել։*
*Արի՛, այս գիշեր ուրախ ժամանակ*
*Անցկացրու, հիմա՛ր, իմ օդայում տաք։*

(Թեվից բռնելով)

*Քեզ պես բյուրավոր անմեղներ չքնաղ*
*Ամեն մի գիշեր լկվում են, ավա՜ղ։*

**Առաջին Նաժիշտ**

*Ուրե՞մն դու ել նման արքայի*
*Թաղեցիր խիղճը ու սիրտը լրիվ*
*Վոչնչության մեջ, շվա՜ք անպատիվ։*

**Սպասյակ**

*Մի խոսի՛ր, յե՛կ առաջ։*

**Առաջին Նաժիշտ**

(Յետ քաշվելով)

*Բավ է, կատաղա՛ծ։*



**Սպասյակ**

(Գրկելով)

*Դու մի խաղալիք,*
*Իսկ յես՝ մի մանկիկ։*

**Սեյավուշ**

(Խիստ յեվ վրդովված)

*Նա մի գառնուկ է, դու՝ կատաղած գազան։*

(Ամեն մեկը ցրված մի կողմ է քաշվում)

*Կեղտոտ, վայրենի զգացում ինչքա՜ն...*
*Վո՜չ, սուտ չի խոսել մայրս պաշտելի,*
*Այլ է յերեսը ներքին սարայի,*
*Ինքն էլ հանգել է այս կեղտերի մեջ,*
*Ջահել հասակը մի պատրանք անվերջ,*
*Բույերի ձայնը գրկել է նրան*
*Ահա և բեմը վոճիրների այն։*

**Սյուդաբե**

(Մտնում է, մռայլ աչքերով նրան է նայում, մոտենում է)

*Սեյավո՛ւշ իմ, սրտակի՛ց,*
*Վշտացել եմ քեզանի՛ց։*

**Սեյավուշ**

*Ո՞ւր է շահը Քեյանի,*
*Խոսք ունեմ նրան ասելի։*

**Սյուդաբե**

*Ինչի՞ մասին։*

Սեյավուշ

Ռազմի մասին։

Սյուդաբե

Խելագարվեցի՞ր և ինչու՞ ռազմի
Խոսքը միշտ բերնումդ, ծայրը քո լեզվի։
Ի՞նչ է, դահի՞ճ ես,
Միթե՞ սիրտ չունես։

Սեյավուշ

Յա՜...

Սյուդաբե

Այո՛, դո՛ւ։

Սեյավուշ

Ինչու՞։

Սյուդաբե

(Ձեռքը կրծքին դնելով)

Ո՛, կա՛ց, ամա՛ն...
Չեմ կարող տանել քո նրբին լեզուն
Պատերազմ բառն է երբ արտասանում։

Սեյավուշ

Ո՜վ վեհանձն մայր, ինչ նուրբ է հոգիդ։

Սյուդաբե

Հասակակից ենք, խղճա, ինձ նայիր,
Ո՛չ թե մայր, այլ քո սիրուհիդ կոչի՛ր։

(Հանկարծ փաթաթվում է)



Սեյավուշ

(Շփոթված, դարձյալ հետ-հետ է քաշվում)

Խիստ հիվանդ ես դու։

Սյուդաբե

Բժիշկս ծիվ է։ Տո՛ւր։

Սեյավուշ

Քո մեջ հոսում է արյունը բոսոր
Մի արաբի բորբ,
Ա՜խ յերանի թե այդ բոցը կրքի
Քեզ չհրդեհի։

Սյուդաբե

Հանգցրու այդ հուրը, ինձ ուրախացրու,
Թե ոչ... դու ինքդ կայրվես այդ հրում։
Անեացման պահին վես,
Այս խոշ որը կը հիշես։

Սեյավուշ

Քեյքյավուս ողլին մահից չի վախում,
Դավաճանության արատն է տխուր,
Որ ինձ ավելի սարսափ է ազդում։

Սյուդաբե

(Ծնկաչոք)

Մի համբույր տուր ինձ։

Սեյավուշ

(Նրա թևից բռնելով՝ բարձրացնում է)

Բավ է, յետ քաշվիր ստորությունից։

**Սյուդաբե**

Ողջ գոյությունն իմ քոնն է, Սեյավուշ։

**Սեյավուշ**

Խայտառակություն անլուր ու խուժդուժ։

**Սյուդաբե**

Գեղեցկության դեմ քո աչքերը կույր,
Նայի՛ր, լա՛վ նայիր, իմ այս կրծքին հույր։

(Կուրծքն է բաց անում)

**Սեյավուշ**

Այո, ամեն մի տեղըդ չքնաղ է,
Սակայն ափսոս վոր աչքիս տգեղ է։

**Սյուդաբե**

Անպատվի՛ր, թքի՛ր, քեզ չեմ թողնի յես։

(Փաթաթվում է)

**Սեյավուշ**

(Հրելով)

Հեռացի՛ր, կրքի առագաստ ու քող
Դու վոչնչություն, դու փառքի մի գող,
Վայրի Սուրիայի դուստրը անաքող։

(Սպասյակը տեսնում է այս պատկերը յեվ յետ քաշվում)

**Սյուդաբե**

(Պատռում է նուրբ մետաքսյա շապիկը, բացվում է կուրծքն ամբողջությամբ)

Աչքերդ կույր են գեղեցկության դեմ...

(Ճչում է խելագարորեն)



Դավաճան, այո, դավաճան ու դև։
Հասեք, ո՛հ, հասեք, խորտակեց ինձ այս
Դավաճանն անսանձ։

**Քեյքյավուս**

(Ձայնը լսելով ներս է մտնում)

Ո՞վ է դավաճանը։

**Սյուդաբե**

Քո հարազատ ջանը։

**Քեյքյավուս**

Ի՞նչ անպատվություն...

**Սյուդաբե**

Հանկարծ ներս մտավ ու մի խոսք նետեց,
Իբրև փնտրում եր իր հայր արքային,
Դավաճանության ինձ ձեռք յերկարեց,
Շապիկըս ճղված... ների՛ր անմեղիս։

**Քեյքյավուս**

Այո, պարզ է շատ։

**Սյուդաբե**

Կեղտոտ արատից փրկիր ինձ, իմ շա՛հ։

(Հեկեկալով վարագույրի յետեվ է քաշվում)

**Քեյքյավուս**

(Ձայնից ներս մտնող սպասյակին)

Կանչեցե՛ք այստեղ աստղագուշակին,
Իսկ դու, Սեյավուշ, տա՛ր, թանկագի՛ն,

Ի՞նչ զգացումից շեղվեցիր այսպես
Մեր ավանդական ճանապարհից վես։

**Սեյավուշ**

Վա՜յ մոլորված եմ, վա՜յ եւ մութ աղվես։

**Քեյքյավուս**

Զըկա՜ ճշմարիտ վորևե մի գիծ,
Ամեն կետ սո՜ւտ է Նրա այդ խոսքից։

**Սեյավուշ**

Ամեն կետ սուտ է, իմ հայր, իմ արքա,
Թե կա մի արատ, ես կը մաքրեմ այն
Արյամբ սեփական։

**Աստղագուշակ**

Ի՞նչ է պատահել։

**Սպասյակ**

Տա՛ն, զրպարտեց Սյուդաբեն։

**Աստղագուշակ**

Հրամայի՛ր, իմ շահ։

**Քեյքյավուս**

Կա մի դեպք խառը,
Մի գաղտնիք դառը...
Բանդի՛ր մեզ համար
Հանգույցը այդ մառ։

**Աստղագուշակ**

(Գլուխը շարժելով)

Խավում է ձեզ մի կին հոգենմա։



**Քեյքյավուս**

Իսկ Սեյավուշը, հանցանք չունի՞ նա։

**Աստղագուշակ**

Նա բացի ռազմից այլ հոգ չունի, շա՛հ։

**Քեյքյավուս**

Ճշմարտությունից սուտը թող ջոկվի։

**Աստղագուշակ**

Հրամայեցե՛ք արքա մեծափառ,
Վոր հուրը վառվի կարմիր, բոցավառ,
Թող անցնեն վրայից և մենք կը տեսնենք—
Ով վոր այրըվի՝ մեղավոր է, նենգ,
Իսկ ով զերծ մնա հրից այդ դաժան
Անմեղ է, ինչպես մատղաշ գառնուկն այն։

**Քեյքյավուս**

(Բարկությամբ)

Այրվողն մեղավոր, չայրվողն՝ անմեղ։

(Ցասկոտ)

Կրակ վառեցե՛ք, հո՛ւր, հրդեհ անեղ։

Վարագույր

Ի՞նչ զգացումից շեղվեցիր այսպես
Մեր ավանդական ճանապարհից վես։

**Սեյավուշ**

Վո՛չ մոլորված եմ, վո՛չ էլ մութ աղվես։

**Քեյքյավուս**

Չըկա՛ ճշմարիտ վորևէ մի գիծ,
Ամեն կետ սուտ է նրա այդ խոսքից։

**Սեյավուշ**

Ամեն կետ սուտ է, իմ հայր, իմ արքա,
Թե կա մի արատ, յես կը մաքրեմ այն
Արյամբ սեփական։

**Աստղագուշակ**

Ի՞նչ է պատահել։

**Սպասյակ**

Շա՛հ, գրպարտեց Սյուդաբեն։

**Աստղագուշակ**

Հրամայի՛ր, իմ շահ։

**Քեյքյավուս**

Կա մի դեպք խառը,
Մի գաղտնիք դառը...
Քանդի՛ր մեզ համար
Հանգույցը այդ մառ։

**Աստղագուշակ**

(Գլուխը շարժելով)

Խառնվում է ձեզ մի կին հոգեհմա՛։



**Քեյքյավուս**

Իսկ Սեյավուշը, հանցանք չունի՞ նա։

**Աստղագուշակ**

Նա բացի ռազմից այլ հոգս չունի, շա՛հ։

**Քեյքյավուս**

Ճշմարտությունից սուտը թող ջոկվի։

**Աստղագուշակ**

Հրամայեցե՛ք արքա մեծափառ,
Վոր հուրը վառվի կարմիր, բոցավառ,
Թող անցնեն վրայից և մենք կը տեսնենք—
Ով վոր այրըվի՝ մեղավոր է, նենգ,
Իսկ ով զերծ մնա հրից այդ դաժան
Անմեղ է, ինչպես մատղաշ գառնուկն այն։

**Քեյքյավուս**

(Բարկությամբ)

Այրվողն մեղավոր, չայրվողն՝ անմեղ։

(Ցասկոտ)

Կրակ վառեցե՛ք, հո՛ւր, հրդեհ ահեղ։

Վարագույր

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Զրադաշտական պաշտամունքն են կատարում՝ կրակի շուրջը յերգելով։

**Քրմեր**

*Մեծ արարիչն է հրամայել,*
*Սա մի փորձ է լոկ—հրում արծարծուն*
*Թե մարդն անմեղ է կապրի անարգել,*
*Յեվ չի այրվում այս բոցավառ հրում։*

(Աղջիկները պարում են)

**Քեյքյավուս**

*Թագուհին մեր է...*

**Առաջին նաժիշտ**

*Ոհ, նվաղել է...*

**Քեյքյավուս**

*Թե նվաղել է, թող ուշքի դառնա,*
*Իսկ թե մեռել է, թող կենդանանա։*

(Նաժիշտը գնում է դուրս)

**Աստղագուշակ**

*Ահա հուրը բոցեղեն։*

**Քեյքյավուս**

*Թող գա իսկույն Սյուդաբեն։*



**Քրմեր**

*Այս բոցերից սրբազան*
*Անցնողները կազատվեն,*
*Դիմողները ծուռ ճամբին*
*Կայրվեն, մոխիր կը դառնան։*

Աղջիկները կրկնում են։ Աստղագուշակը վերցնում է Սեյավուշի թագն ու սուրը յեվ հագցնում է սպիտակ յեվ յերկար մի շապիկ։ Սյուդաբեն ներս է մտնում դալկահար, մազերը ցրիվ՝ նաժիշտների հետ միասին)։

**Քեյքյավուս**

*Մոտեցի՛ր։*

**Սյուդաբե**

*Հրամայի՛ր։*

**Քեյքյավուս**

*Մտի՛ր հուրը կեզ։*

**Սեյավուշ**

*Հայր, պատրաստ եմ յես։*

**Սյուդաբե**

*Ափսոս է ու մեղք քաջ Սեյավուշին։*

**Քեյքյավուս**

*Առաջ դո՛ւ մտիր, կլի՛ն լպիրշ ու սի՛ն։*

**Սյուդաբե**

*Դա դյուրեկան է ինձ համար հիմա,*
*Սրտումս հրդեհ է, գլխումս՝ ֆուրտունա։*

(Դառն ծիծաղով)

Միթե կրակը կազդի կրակին։
Սիրահարվեցի ես Սեյավուշին։

**Քեյքյավուս**

(Ծափ զարնելով)

Դահի՜ճ...

(Ատելավառ աչքերով նայում է Սյուդաբեյին)

Ընկեցի՜կ աղջի՜կ։

(Երկու կացնահարների հետ մտնում է դահիճը)

Վերցրե՛ք այս քածը, կախեցե՛ք իսկույն,
Դիակը լինի օրինակ ամենուն։

**Սյուդաբե**

(Դառն և հնչեղ քրքիջով)

Ի՜նչ սարսափելի վորոշում է դա...
Թե լավ մտածես—անսերն անզգա
Կենդանի շիրիմ, մի դամբան է մութ,
Սիրով մեռնողն է բախտավոր, անգո՜ւթ։

(Մի քանի քայլ հեռանալուց հետո՝ ետ է դառնում)

Սեյավո՜ւշ, քո մեկ, մեկ հատիկ պագը
Ավելի է քան Քեյանի թագը։

**Սեյավուշ**

Ա՜հ, դու...

**Սյուդաբե**

Մնաս բարով դու,
Մնաս բարով դու,



Անգո՜ւյթ դյուցազուն։

(Գնում են)

**Քեյքյավուս**

Մետաքսահյուս ոձ,
Վագըր վոսկեզոծ։

**Սեյավուշ**

Շնորհք եմ խնդրում։

**Քեյքյավուս**

Ասա։

**Սեյավուշ**

Ինչու ես կախում։

**Քեյքյավուս**

Ի՞նչ անեմ ապա։

**Սեյավուշ**

Բանտը թող նետեն, գուցե և արարիչն,
Մեծ է, վողորմած, նրան կը գթա,
Իր արածներից գուցե և զղջա։

**Վեզիր**

Ձեր վորդու սաստն է խիստ խելացի,
Առաջարկ, վորը չես ել հավնեցի։

**Քեյքյավուս**

Վո՛չ, չի կարելի։

**Վեզիր**

Ինչու չի լինի։

**Քեյքյավուս**

*Ինչու հարցնում եք—այդ մոլորվածը*
*Քեյանի թագին բիծ է, այդ քածը։*

**Սեյավուշ**

*Մի կին է վարան,*
*Գթացեք նրան։*

**Վեզիր**

*Յեթե գլխատեք, թագուհի է նա,*
*Ամբողջ Իրանը պիտի վշտանա։*

**Քեյքյավուս**

*Գնա և ասա—այդ սարի փերին*
*Չը պետք է լսի մի ձայն մարդկային։*

**Ռուստամ**

(Մտնելով)

*Կեցցե՜ մեր շահը, բանակը պատրաստ*
*Սպասում է ձեր հրամանին զգաստ։*

**Քեյքյավուս**

(Աստղագուշակները գնում են։ Վորդան)

*Սեյավուշ, վրադ ել կասկած չըկա,*
*Յես հիացա քո ջինջ խըղճի վրա,*
*Գուցե բիծ ունեն արևն ու լուսին*
*Յես չեմ կասկածում իմ Սեյավուշին։*
*Կաթըդ մաքուր է ու ճակատըդ՝ բաց,*
*Չի կարող հաղթել քեզ ամեն մի քած։*



*Ցավրհւս, բանակի աչքը ջուր դառավ*
*Աստվածն հաղթության քինչ չե անիրավ։*

(Քեյքյավուսը ձեռով նշան է անում։ Ռուստամը, Սեյավուշը, Թուսը, Բեհրամը յեվ ռազմիկները գնում են)

**Վարագույր**

# ՑԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Մոտակայքում մի գյուղ։ Հեռվից յերեվում ե Բելխի բերդը։ Բեմում Իրանի գյուղացիները քար յեվ ցեխ կրելով նոր բերդ են կառուցում։ Աշխատողների մեջ կան նայեվ աղջիկներ յեվ կանայք։ Աշխատանքի վայրի մոտ կան յերկու վրան։ Վարագույրը բացվում ե նվագով։ Յերկու վոստիկանական պաշտոնյաներ մտրակներով հարվածում են քայլող բանվորներին, ստիպելով նրանց արագ շարժվելու։ Յերկու վորմնաշար պատի վրա աշխատում են յերգելով։

**Առաջին վորմնաշար**

*Արի՛, բալամ, շուտ արի,*
*Ճամբին մնաց աչքս, արի՛։*
*Ցեխ բե՛ր, շուտ բե՛ր ու քար բե՛ր,*
*Կանգ մի՛ առնի, ընկե՛ր, բե՛ր։*

**Յերկրորդ վորմնաշար**

*Հայդե՛, աղյուս ինձ նետի՛ր,*
*Կիր բե՛ր, քիչ ել ջուր խառնի՛ր,*
*Մի ուշանա, շուտ արի,*
*Վնաս մի՛ տա, դե՛, արի։*

**Առաջին հսկիչ**

(Հրելով մի կաղ ստրուկի)

*Դե՛, շուտ քայլի՛ր, մի՛ կաղա,*
*Շատ չը մնաց իրիկվա։*



**Յերկրորդ հսկիչ**

(Հարվածելով ծեր գյուղացուն)

*Հայդե՛, շտապի՛ր, ծերուկ դու հիմա՛ր,*
*Գիտե՞ս, մտրակ կա ծույլերի համար։*

**Ծերուկ**

*Մի զարնի, գթա՛, ուժերս հանգել են,*
*Ե՛լ հոգի չկա, ուժասպառ արդեն։*

**Յերկրորդ հսկիչ**

*Ե՛լ խոսք չեմ ուզում, լռի՛ր, անպիտա՛ն,*
*Շահ Քեյքյավուսի այս ե հրաման,*
*Վոր այս նոր բերդը, ինչ ել վոր լինի,*
*Պետք ե ավարտվի առ մեկըն ամսի։*

**Առաջին հսկիչ**

*Ով վոր խուսափի՝*
*Կենթարկվի մահի։*

**Յերկրորդ հսկիչ**

*Այո՛, այս բերդն անառիկ*
*Պիտի հասնի մինչ յերկինք,*

(Հեռվում ցույց ե տալիս Բելխ ամրոցը)

*Բելխ ամրոցին հանդիման՝*
*Տիրապետող, աննման։*

**Առաջին վորմնաշար**

*Արի՛, բալամ, շուտ արի*
*Ճամբին մնաց աչքս, արի՛.*

Ցեխ բեր, շուտ բեր ու քար բեր,
Կանգ մի առնի, ընկեր, բեր։

**Երկրորդ վորմնատար**

Հայդե՛, աղյուս ինձ նետիր,
Կիր բեր, քիչ էլ ջուր խառնիր,
Մի ուշանա, շուտ արի,
Վնաս մի տա, դե՛, արի։

**Մի բանվոր աղջիկ**

(Ձեռին դատարկ ցեխի մի աման, ներս է մտնում խուճապով)

Յեկան, ա՛հ, յեկան։

**Առաջին հսկիչ**

Ո՞վ, ասա, ամա՞ն։

**Բանվոր աղջիկ**

Զինվոր բավական։

**Առաջին հսկիչ**

Մեզ համար պարզ է, զինվորներ շահի։

**Երկրորդ հսկիչ**

(Նայելով)

Այդտեղ մի՛ կանգնիր, այս կո՛ղմը արի։

(Գնում են։ Աշխատող գյուղացիները մի կողմ են հավաքվում)

**Ալթայ**

Սարայի գայլերն կատաղել են դարձյալ,
Պիտի տրորեն յուրդերը ծաղկյալ։



**Տերուկ**

Մի վոգևորվիր, Ալթայ, կը լսեն,
Իբրև ապստամբ քեզ կը կոտորեն։

**Ալթայ**

Ամբողջ Իրանը տնքում է սովից,
Այս անխիղճները սնվում արյունից։

**Տերուկ**

Հյուծող մտրակներն ժողովրդին մեր,
Նետեր ու սրեր չվերջացան դեռ։

**Բանվոր աղջիկ**

Ասա, շահն էլ նրանց հե՞տ է։

**Տերուկ**

Ո՞վ գիտե...

**Բանվոր աղջիկ**

(Մանկական միամտությամբ)

Հայրի՛կ, շա՞հն էլ է մի մարդ մեզ նման։

**Տերուկ**

Մարդ է համարվում նա էլ մի տեսակ։

**Ալթայ**

Միայն թե յերկու կոտոշ ունի նա։

**Բանվոր աղջիկ**

(Տերուկին)

Յերբեք չեմ լսել կոտոշավոր շահ,
Այդ խոսքը ճի՞շտ է, հայրիկ, ինձ ասա։

Ծերուկ

*Ճիշտ է, հավատա։*

Առաջին վորմնացար

*Թե կոտոշավոր չեր Քեյքյավուսը՝*
*Ձեր վերցընի կին մի ուղուրսուզը։*

Ծերուկ

*Չը կարծեք, վոր նա մարդ է աննման։*

Առաջին վորմնացար

*Ականջների տակ բուսել է զաֆրան*[1]*։*

Բանվոր աղջիկ

*Ցեղած բանն է դա։*

Ծերուկ

*Թե ճիշտը կուզես պատկերացընել,*
*Այս է սարայի ցերեսը ներքին,*
*Այդ վորդերն են միշտ բոզության ընտել,*
*Մենք ենք լոկ սովոր ամոթին, պատվին։*

Առաջին հսկիչ

(Ընկերոջ հետ միասին յետ դառնալով)

*Հ՞ը, ոգտըվում եք առիթից ելի,*
*Դե՛, հայդե՛, գործի՛,*

(Կաղ գյուղացուն մոտենալով)

*Դու խո՛զ անճոռնի։*

---

1 *Նշանակում է ծերացած կավատ։*



Առաջին վորմնացար

*Ցեխ բեր, շուտ բեր ու քար բեր,*
*Կանգ մի առնի, ընկեր, բեր։*

Յերկրորդ վորմնացար

*Բալամ, աղյուս ինձ նետի՛ր,*
*Կիր բե՛ր, քիչ էլ ջուր խառնի՛ր։*

Առաջին հսկիչ

(Ուժգին մտրակելով մտածկոտ կանգնած ծեր գյուղացուն)

*Կանգ մի՛ առնի, շո՛ւտ,*
*Ցնկած դու ծերուկ։*

Ծերուկ

*Յեղո՛ւկ...*

Յերիտասարդ

(Նրա թեվից բռնելով բարձրացնում է։ Հսկիչին)

*Անխի՛ղճ։*

(Յերիտասարդին ապտակելով)

*Սահմանըդ չանցնես, կեղտոտ դո՛ւ յեղինձ։*

Յերիտասարդ

*Մի անգամ էլ զա՛րկ։*

Առաջին հսկիչ

*Ա՛ռ, խոսք է դատարկ։*

Յերիտասարդ

(Նրան բռնելով ծնկի տակ է առնում)

Շփացար, բավ է, հասավ իմ հոգուն,
Քեզ նման մարդուն այսպես են պատժում։

**Երկրորդ հսկիչ**

(Աշխատող գյուղացիների միջով արագ վազելով)

Թո՛ղ։

**Գյուղացիներ**

(Նրա վրա հարձակվելով)

Չվոգեվորվես։

(Նրան բռնում են)

**Առաջին հսկիչ**

(Խեղդված ձայնով)

Թո՛ղ։

**Յերիտասարդ**

(Առաջին հսկիչին վոտքով հրելով)

Բերանըդ փակի՛ր, ստո՛ր արարած,
Մենք չենք թողնի, վոր մեզ հետ խաղ խաղաս,
Առաջին դասն է, այդ չմոռանաս,
Չի մնա կատաղածն պատիժից անմաս։

(Տիրոք մի լռություն ... Այս պահին զինվորական նվագը հնչում է ամեն կողմից: Թուսի հետ միասին պաշարում են իրանական զորքերը չորս կողմից:)

**Մի գյուղացի**

(Անձկությամբ ներս է մտնում: Աշխատողներին)

Ո՜վ թշվառներ, դուք անվերջ



Այստեղ քրտինք եք թափում,
Ձեր խրճիթները գյուղում
Ընկղմվել են սգի մեջ։

**Թուս**

Ի՞նչ է պատահել։

**Գյուղացի**

Արշավողները դաժան
Թալանեցին ամեն բան։

**Բանվոր աղջիկ**

(Թուսի զինվորներին)

Ո՜, մեզ ոգնեցե՛ք,
Մեր հույսը դուք եք։

**Թուս**

Շուտ պետք է հարձակվել,
Յեվ բոլորին վռընդել։

**Զինվորներ**

Առա՜ջ, առա՜ջ, մի կենաք,
Դարձնե՛նք ու տա՛նք վոտի տակ։

Զինվորների մի մասը, հսկիչները յեվ գյուղացիները գնում են: Նվագ)

**Թուս**

(Ուրիշ կողմ նայելով)

Այս ճանապարհից մարդիկ են անցնում,
Տեսնե՛ք ի՞նչ յերկրից և ո՞ւր են գնում։

Առաջին ռազմիկ

*Հե՜յ, ճանապարհորդ, հե՜յ, կաց, մի՜ անցնի։*

Թուս

*...Նմանվում է օտարի։*

(Ազնվականի տեսք ունեցող մի չինացի է մոտենում նրանց)

Առաջին ռազմիկ

*Առաջ արի՜։*

Թուս

*Ո՞վ եք դուք։*

Պատվիրակ

*Չինաստանից մի դեսպան*
*Բերել եմ մեր կայսրից չին*
*Քեյքյավուսին արմաղան։*

Թուս

*Իսկ ընկերներդ ի՞նչ տեղացի։*

Պատվիրակ

*Պարզ է—չինացի։*

Առաջին ռազմիկ

*Լրտես են գուցե։*

Թուս

*Դու լռի՜ր, բավ է։*

Մի զինվոր

(Մտնում է: Բարեվում է)



*Թո՛ւս դյուցազուն,*
*Շատ հեռուն,*
*Ճամբի կիսուն*
*Բարձրացավ փոշի։*

Թուս

*Նշան Ռուստամի և Սեյավուշի։*

(Երկու—յերեք զինվորի հետ հեռանում է)

Առաջին ռազմիկ

(Պատվիրակին, յեկած կողմը ցույց տալով)

*Այնտեղ յես տեսա մի աղջիկ նրբին։*

Մի զինվոր

*Մի՜ ասի աղջիկ, այլ նազանք ինքնին։*

Պատվիրակ

*Չին կայսրը նրան ղրկել է շահին։*

Առաջին ռազմիկ

*Բե՜ր ինձ, դուր յեկավ նա իմ ճաշակին։*

Երկրորդ զինվոր

*Թո՛ղ, Սեյավուշին թե ականջն ընկնի,*
*Մեր մեռելներին շիրմից կը հանի։*

Առաջին զինվոր

(Հեգնական ծիծաղով)

*Սիրուններին նայելը*
*Սնունդ է հոգու,*

*Քո անհանգիստ լինելը*
*Ավելորդ է, զուր։*

**Մի զինվոր**

(Ձին պարուհուն բերում են։ Լղար, տգեղ յեվ յերեսները բորոտած մի Քոսակ լրտեսում է նրանց)

*Մի ոտար յերկրից քնքուշիկ ընծա։*

**Առաջին ռազմիկ**

*Ո՛հ, ի՞նչ ես դու։*

**Քոսակ**

(Աղջիկը ցույց տալով)

*Շվաքը նրա։*

**Առաջին ռազմիկ**

(Պատվիրակին յեվ Քոսակին)

*Դուք գնացե՛ք,*
*Վրանի տակ*
*Սպասեցեք։*

(Պատվիրակը գնում է)

**Պարուհի**

(հուզված)

*Ա՜հ...*

**Քոսակ**

*Յես չեմ գնում։*



**Առաջին ռազմիկ**

*Դու չե՞ս գնում, անառակ։*

(Վոտները բարկությամբ գետնին է խփում)

**Քոսակ**

*Ինչպե՞ս բաժանվեմ դստրիցս յերկնառաք։*

**Առաջին ռազմիկ**

*Հրեշտակ է նա,*
*Իսկ դու՝ սատանա։*

**Քոսակ**

*Լույս ցերեկները ամենից փայլուն*
*Մութ գիշերներից ծնունդ են առնում։*

**Առաջին ռազմիկ**

*Լռի՛ր, սո՛ւս արա։*

**Քոսակ**

*Լալան եմ նրա,*
*Յերախտիքս վկա։*

(Ներս են մտնում գյուղին ոգնության գնացող հսկիչները յեվ զինվորները՝ բաժակներով, գինու կժերով յեվ թալանված ապրանքներով)։

**Առաջին ռազմիկ**

*Ի՞նչ շուտ։*

**Յերկրորդ ռազմիկ**

*Անհայտացել են, վոչ մի մարդ չկա։*

**Առաջին ռազմիկ**

(Կժերը ցույց տալով)

*Ի՞նչ են սրանք ապա։*

**Երկրորդ ռազմիկ**

*Խմելու բաներ, ընտիր, գերակա։*

(Սուլում է)

*Ընկեր յեղանք մենք մարդկանց գյուղացի,*
*Յերբեք չեմ ըմպել այսպես լավ գինի։*

**Առաջին ռազմիկ**

(Պառուհուն)

*Գինի լցրու մեզ։*

**Քոսակ**

*Թույլ տվեք տամ յես,*
*Թող նա էլ պարի։*

**Երկրորդ ռազմիկ**

*Նրա տալիքը քաղցր է ավելի։*

**Քոսակ**

*Դուք ինչ-վոր ասեք, սրտիս դուր կգա։*

(Աղջիկը գինի է բաժանում: Նվագախումբը դանդաղ յեղանակ է նվագում: Քոսակը զանազան շարժումներով յեվ ծաղրածություններով պարում է):

**Առաջին ռազմիկ**

(Երկրորդ ռազմիկին ցույց տալով պառուհին)

*Յեթե չես տեսել յեղնիկ չինական,*



*Տես,*
*Կույրը լույս կառնի թե նայի նրան։*

**Երկրորդ ռազմիկ**

*Թող աղջիկը, վոր պարի,*
*Դու էլ լցրու մեզ գինի։*

**Քոսակ**

*Գլխիս վրա, շատ լավ,*
*Ձեզ հոգիս մատաղ։*

(Նվագի յեղանակը փոխվում է: Աղջիկը պարում է: Քոսակը թղթի մեջ փաթաթված թույնը հանում է գրպանից, ածում է կժի մեջ: Հետո ածում է բաժակների մեջ: Խմում են: Ինքն էլ շշնջում է):

*Գինու մեջ թույն խառնեցի,*
*Ծոմս վերածվեց պատրանքի։*
*Կըմպեն, բոլորը կըմպեն,*
*Ցավերից ձեռք կը քաշեն։*
*Դարձրու կյանքը հաճելի,*
*Շատ թանձր է շերտը հողի,*
*Քեզ իր կամքին կը բերի,*
*Բաժակիդ թույն կը խառնի,*
*Առիթը քոնն է քանի*
*Լցրու խղճը քո սրտի։*
*Այս կյանքի ճոխ սեղանից*
*Մի տաք համբույր ստացիր,*
*Ու քեֆ արա, զվարճացիր։*

**Բոլորը**

*Այս կյանքի ճոխ սեղանից*

*Մի տաք համբույր ստացիր,*
*Ու քեֆ արա, զվարճացիր։*

**Պահակ**

(Չորս կողմը նայելով յեվ շփոթված)

*Այնտեղ ինչ վոր մի բան կա։*

**Առաջին ռազմիկ**

*Ասպատակներ աներկբա։*

**Յերկրորդ ռազմիկ**

*Թույլ տվեք, վոր գան*
*Մեր ուժն իմանան։*

**Առաջին ռազմիկ**

*Թագուն մի տեղ պահվըտենք։*

**Յերկրորդ ռազմիկ**

*Իսկ գինիներն ի՞նչ անենք։*

**Առաջին ռազմիկ**

*Խմե՛ն, գինովնա՛ն,*
*Գինով վիճակում թևերը կապենք։*

(Քոսակին)

*Վերցրու աղջկան,*
*Կորի՛ր չմոռանաս,*
*Յեթե քո բերնից մի խոսք էլ դուրս տաս՝*
*Տանը քո մորը սև արցունք կտաս։*

**Քոսակ**

*Բերանըս փակ է։*

(Պարունին ու Քոսակը միասին գնում են)



**Առաջին ռազմիկ**

(Իր ընկերներին)

*Հարձակումը թուրանցու*
*Ո՛ւմ, կը լինի մահացու։*

**Յերկրորդ ռազմիկ**

*Պետք չէ շփոթվել, ինչ թշնամու վրա —*
*Վոր մենք հարձակվենք՝ ճագար կը դառնան։*

**Առաջին ռազմիկ**

*Մի գոռոզանա, թշնամուն թերի*
*Գնահատողներ շուտով կը հեծեն,*
*Հպարտ գլուխներ շուտով կը ծռվեն,*
*Հաղթողի առաջ՝ կը չոքեն ծնկի։*

**Յերկրորդ ռազմիկ**

(Հեգնական ծիծաղով)

*Ըստ յերևույթին մայրըդ՝ դեռ մանուկ*
*Քեզ վախեցրել է ոտարից սարուկ։*

(Հեռանում են։ Նվագ։ Մտնում են հինգ-վեց հոգի թուրանական առաջապահներից։ Ստուգում են կժերը յեվ բաժակներում մնացած գինին խմում են)

**Առաջին Յերիտասարդ**

*Կժերը լիքն են, բայց վո՛չ վոք չկա։*

**Յերկրորդ Յերիտասարդ**

*Վախից փախել են, վախկոտ սատանան։*

**Յերրորդ Յերիտասարդ**

*Շատ մի պարծենաք։*

**Առաջին Յերիտասարդ**

*Քիչ խմեք, տղերք, շատ մի հագենաք։*

**Յերկրորդ Յերիտասարդ**

*Անսպառ հաճույք տալիս է մարդուն։*

(Դարձյալ լցնում են բաժակները յեվ խմում յեվ յերգում են աշխույժ յեվ ուրախ յերգեր)

**Առաջին Յերիտասարդ**

*Սրեր թող փայլին,*
*Յեվ վորոտագին*
*Գոռան ու թնդան*
*Յերկիր ու յերկին։*

**Բոլորը**

*Թո՛ղ թնդան, գոռան*
*Հա՛, գոռան, թնդան։*

**Առաջին Յերիտասարդ**

*Թշնամի ու բարեկամ*
*Թող մեր ուժը հասկանան։*

**Բոլորը**

*Թո՛ղ հասկանան, հասկանան,*
*Հա՛, հասկանան, հասկանան։*

**Առաջին Յերիտասարդ**

*Նետ չենք արձակի մենք նպատակին։*

**Բոլորը**

*Մենք նպատակին, հա՛, նպատակին։*

**Առաջին Յերիտասարդ**

*Հերոսներն ուր են, թող գան հրապարակ։*



**Բոլորը**

*Գան հրապարակ, հա՛, հրապարակ։*

**Առաջին Յերիտասարդ**

(Սուրը հանելով)

*Առաջ հարձակվենք, հարձակվենք առաջ։*

**Յերկրորդ Յերիտասարդ**

*Թո՛ղ ինձ, հարբեցի, էլ վո՛չ ձախ, վո՛չ աջ։*

**Առաջին ռազմիկ**

(Ընկերների հետ, մերկ սրերով, դուրս են գալիս իրենց թաքստոցից)

*Դուք ո՞վ եք, հե՜յ ղո՛չաղներ։*

**Առաջին Յերիտասարդ**

*Վախ չիմացող կտրիճներ։*

**Առաջին ռազմիկ**

*Թե այդպես է, յեկ տեսնենք։*

**Առաջին Յերիտասարդ**

*Ո՛հ, աբե՜, կռվենք։*

(Յերկու կողմերն էլ կռվում են հարբածի շարժումներով: Մի քանիսը վիրավորվում են, մյուսները՝ յերերում: Նույն պահին մի կողմից Կերչիվեզը, մյուս կողմից՝ Բեհրամը յեվ Թուսը իրենց զինվորներով խառնվում են նրանց: Կռիվը սաստկանում է: Հետո մտնում են Ռուստամը ու Սեյավուշը):

**Ռուստամ**

(Գոռում է հպարտ յեվ հրամայական)

*Կեցե՛ք,*
*Անմտությունն էլ բավ է։*

**Սեյավուշ**

Հոսող արյունն էլ բավ է։

**Երկրորդ Երիտասարդ**

Ես սթափվեցի, ինձ գինի տվեք։

**Առաջին Երիտասարդ**

Աղեղ բերեք, նետ բերեք։

(Աղեղին նետ անցկացնելով)

**Սեյավուշ**

(Ընկած վիրավորներին ցույց տալով)

Եվ ինչու համար այսքան ժողովուրդ
Ջուր տեղը լինի թորված, ջարդ ու բուրդ,
Ընտրենք կողմերից բազուկներ պողպատ,
Թող մենամարտեն քաջերը հատ — հատ։
Ով հաղթանակի, հռչակվի վարպետ։

**Ռուստամ**

Եֆրասյաբն ծեր է, թող գա հրապարակ,
Գրկի բազուկը, տանա հռչակ։

**Գերսիվեզ**

Եթե նա չկա,
Ահա ես ներկա։

**Ռուստամ**

Չի կռվի Ռուստամն ամեն քաջի հետ։

**Գերսիվեզ**

Մի՛ գոռոզանա,
Ծիծաղողն առաջին
Լացողն է վերջին։



**Սեյավուշ**

(Բեհրամին)

Անակնկալ է անպատվությունը,
Ո՞վ կարող է տանել այս սուր սուտը։

**Ռուստամ**

Նա քաջ է, անվախ, դու մի՛ մոռանա։

**Սեյավուշ**

Ես տղամարդ չեմ թե խնայեմ նրան։

**Գերսիվեզ**

(Հեգնական ծիծաղով)

Խոխաներ ինձ դեմ դուրս գալ են ուզում։

**Սեյավուշ**

Հանդգնությո՜ւն ... ինձ խոխա ես կոչում։
Այդ խոսքը չնչին՝ կորոշի ո՞վ — ում։

**Գերսիվեզ**

Մտածի՛ր մի պահ, մեղք չէ՞ քո մորը։

**Սեյավուշ**

Ավելի լավ է կռվել, քան որ
Անցկացնել դատարկ ինքնագովությամբ։

(Փայլում են սրերը: Մի քիչ ընդհարվում են)

**Ռուստամ**

Քանի Իրանը այսպես ասլանին
Վստահանում է իր պատիվը հին,

*Վո՛չ վոք չի կարող ծիծաղել վրան,*
*Լինի թշնամի նա, թե բարեկամ։*

**Կերշիվեզ**

(Վեր է կենում, դարձյալ հարձակվում)

*Չեն վախեցնի մեզ վերքերն այսպես։*

**Սեյավուշ**

*Միշտ պատրաստ եմ ես։*

**Փիրան**

(Շտապ մտնում է յեվ գոռում)

*Կաց, սպասեցեք,*
*Ի՞նչ պատահեց ձեզ։*

**Ռուստամ**

(Թուսին մեկուսի)

*Այս ծերը ո՞վ է,*
*Յեվ ի՞նչ հերոս է։*

**Թուս**

*Նա Եփրասյաբի Փիրանն է—վեզիր։*

**Փիրան**

*Ի՞նչ բանի համար սարսափն այս զազիր,*
*Ի՞նչ բանի համար արյունն այս նանիր։*

**Ռուստամ**

*Այս մասին գիտե սարդարը միայն։*



**Կերշիվեզ**

*Բոցավառվել է ինձանից թագուն*
*Կռիվը վրեժի այս վոչ իմաստուն։*

**Ռուստամ**

(Թուրանական զինվորներին ցույց տալով)

*Ի՞նչ մրրիկ է կատաղեցրել սրանց։*

**Կերշիվեզ**

*Մարդ ուղարկեցի, վոր առնի ճիշտ լուր,*
*Ընդհարման մասին իմանա ու գա,*
*Տեսա փայլում են մերկ սրերը սուր։*

**Փիրան**

*Պարզ մի պատճառ կա։*

**Ռուստամ**

(Գրպանից մի թուղթ հանելով նրան է յերկարում)

*Ահա նամակը, կարդա՛։*

**Փիրան**

(Կարդում է)

*Սա մի դավ է անիրավ։*

**Ռուստամ**

*Ապա թալաններ, ապստամբություն,*
*ի՞նչ արարքներ են սրանք արնադավ։*

**Փիրան**

*Ապստամբությո՞ւն։ Սովորական խաղ...*
*Ձերոնք թողնում են յեզ, կով ու վոչխար,*

*Մենք հարձակվում ենք պարենի համար,*
*Ի՞նչ հանցանք ունի յերկիրը խաղաղ։*

(Ուժեղ նվագ: Նույն պահին ներս են մտնում կիսամերկ, վիրավոր մի խումբ գեղջուկ տղամարդիկ: Գեղջուկները շարժում են ձեռքի փայտերը, յերնակները, մանգաղները յեվ կացինները ապստամբական շեշտով)

**Ծերուկ**

*Ահա նրանք անաստված,*
*Այս կատաղածները փրփրած,*
*Տրորեցին, թալլեցին,*
*Պիղծ ձեռքերով դավեցին։*

**Ռուստամ**

*Դավաճանները դուք մեզ ցույց տվեք,*
*Վոր դատապարտվեն նրանք մեկ առ մեկ։*

**Ալթայ**

(Հուզված ցույց է տալիս թե ճեռուները՝ յեվ թե Իրանի զինվորները)

*Այս կողմ Թուրանի հոծ ղաչաղները,*
*Այն կողմ Իրանի ղոչ ասկյարները,*
*Մեր արյունը խմեցին,*
*Ու խմելով հագեցան,*
*Շոպկեցին հարս ու աղջիկ*
*Յեվ թողեցին անշապիկ։*

**Ծերուկ**

*Դալուկ դեմքեր, աչքերում հուր չըմնաց,*
*Խորըն ընկած կրծքերում թոք չըմնաց։*



**Ռուստամ**

(Իր շուրջը յեղողներին)

*Ամոթ ձեզ, ամոթ, այո, բյուր ամոթ,*
*Անսպասելի ցածություն անոգ։*
*Ավելի լավ է ձեզնից թավունը[1])*
*Թույլատրելի չե վայրենությունը։*

**Փիրան**

*Անջնջելի այս մութ լաքան*
*Անվայել է զինվորության։*

**Ալթայ**

*Անեծք այս կյանքին, բավ է, զզվեցի՛նք,*
*Մեր վառած հրում ինքներս այրվեցինք։*

**Ծեր գյուղացի**

(Գյուղացիները ցույց տալով)

*Նայեցեք նրանց, նայեցեք սրանց։*
*Անեծք ձեզ և ձեր որենքին անսանձ։*

**Ալթայ**

*Թե թավունը թե չուման*
*Լավ է ձեզնից ավելի,*
*Ձեր տանջանքից ահռելի*
*Սարսափում է մահն անգամ։*

**Սեյավուշ**

(Սարսուռ է զգում, զայրացած յեվ հուզված)

*Ձեր անցած վայրում բայղուշն է յերգում,*

1) *Թավուն—ժանտախտ։*

Լկտի՛ հարբածներ, հերոսի մորթում,
Թշվառի հանդեպ մարդուց անզգա
Ավելի մեծ է վագրը աներկբա։
Յեկանք մեր յուրդը[1]), վոր անխախտ մնա
Մեր բանակն է այն անում արյունլվա։
Սով, քաղց, Ջրհեղեղ, Փուրտունա ու մահ։
Բոլորը մի կողմ, դուք մի կողմ ահա։

**Ալթայ**

Սրանից հետո յերդում եմ խղճին,
Ով վոր ծուռ նայի այս Թշվառներին,
Շանթեր Թող պայթեն նրա պիղծ գլխին,
Անունն ել նրա—մի շիրմի քարին։

**Վարագույր**

1) Յուրդ—ոջախ, հայրենիք, բույն, ընտանի վայր։



## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Քեյխյավուսի սարայում մի ուրիշ սրահ։ Սյուդաբեն հենված է գահին, շրջապատված նաժիշտներով։ Չին աղջիկը—պարուհին, նուրբ յեվ լիրիկական նվագին ներդաշնակ յերգում է յեվ պարում։

**Պարուհի**

Ո՜, պաղ համբույրը գարնան անթախիծ
Մազերիս Թառեց մուԹը փախչելիս,
Հարբած բլբուլի յերգը նվաղուն
Իմ հոգիս շոյեց, յերբ վարդն եր բացվում։
Սմբուլ, մանուշակ, հասմիկ, նունուֆար
Ինձ ալմաստ ցողից գինի տվին վառ։
Յերբ արևը մերկ մարմինըս ծծեց,
Լելակից հյուսված շղարշ եր կարծես։

(Հեռանում է սրահից)

**Սյուդաբե**

(Վեր է կենում, նստում է ուրախ հայացքով յեվ քրքջալով)

[illegible] է, վոր Սեյավուշն իմ
Կարծեցի [illegible]
Խավարը ճեղքող կիջատների պես
Մաքելու համար [illegible] այսպես։
[illegible]
Այնինչ մի [illegible]

**Սյուդաբե**

*Լռի՛ր, մի՛ գովիր այդքան իմ լույսը։*

**Յերկրորդ Նաժիշտ**

*Աշխարհն առանց քեզ մի բանտ է նրան։*

**Սյուդաբե**

*Յես չեմ հավատում այդ բանին այնքան։*

**Յերկրորդ Նաժիշտ**

*Յերդում եմ անում հանուն լուսաստղին։*

**Առաջին Նաժիշտ**

*Յերդվում եմ հանուն Սուրբ դատրիկին։*

**Սյուդաբե**

(Տխուր հառաչելով)

*Թեկուզ աշխարհը չոքի իմ առաջ՝*
*Լոկ Սեյավուշին իմ սիրտս է հառած,*
*Բանտում վող բալիս, յերազում, նրան,*
*Նա է իմ սիրույս սկիզբն ու վախճան։*

**Ռյուբաբե**

(Ներս մտնելով լսում է վերջին խոսքերը)

*Մեղք … Յես չեյի քեզ կարծում թույլ այդքան,*
*Թող համբույրի քեզ հուրը հաղթության։*

**Սյուդաբե**

*Վոչ, վոչ, ուրիշ է իմ վիճակն այսոր,*
*Սիրտըս խփում է շատ ծանըր ու խոր,*
*Իմ միակ իղձն է միանալ նրան,*



*Իմ աչքերում նրա պատկերն է միայն։*
*Թե Սեյավուշի գլուխը համառ*
*Չի խոնարհվելու իմ սիրույս առաջ*
*Կարմիր արյան մեջ կուզեմ տեսնել նրան,*
*Յեվ ծամից հյուսել պսակ աննման։*

(Նվագ)

**Քեյքյավուս**

(Ներս է մտնում, Սյուդաբեյին տխուր տեսնելով)

*Ինչու՞ թախծոտ է արևը գարնան։*

**Ռյուբաբե**

*Հիշեց ու տխրեց անցյալը դաժան։*

**Քեյքյավուս**

*Վաղը խոշ լինի, անցյալը՝ վոչինչ։*

**Ռյուբաբե**

*Սյուդաբեն գոհ է ձեր շնորհներից։*

**Սպասյակ**

(Ներս է մտնում յեվ խոնարհվում է)

*Պատվիրակը Չին։*

**Քեյքյավուս**

*Թող ներս գա կրկին։*

(Սյուդաբեյին)

*Իսկ քեզ հետ հետո։*

(Նրանք դուրս են գնում։ Պատվիրակը ներս է մտնում։ Քեյքյավուսը իր մոտ նրան տեղ ցույց տալով)

*Համեցեք։*

**Պասկևիչ**

(Նստելով)

Ցեկել եմ ձեզ մոտ տեսության վերջին։

**Քեյխոսրով**

Ի՞նչ է ձեր կարծիքը Եփրասյաբի մասին։

**Պասկևիչ**

Նա մի վտանգ է Իրանի, Չինի,
Չափը անցնում է նա ամենայն օր,
Թե՛ ձեզ և թե մեզ հանդեպ վոխ ունի։

**Քեյխոսրով**

Չի վախեցընի մեզ այդ փուրտունյան,
Վողջույն իմ կողմից Չինի խաքանին,
Թե մեր դաշինքը լինի հիմնական՝
Հորիզոնն Ալթայի կը մթնի խորին։

**Պասկևիչ**

Թե մենք լինենք միասին,
Շուտ կը փակենք բերաննին։

**Սյուզաբե**

(Պարուհին յեվ Քոսակի հետ ներս են մտնում։ Քեյխոսրովուհին)

Պարուհին ձեզնից [illegible]

[illegible]

**Քեյխոսրով**

[illegible]

Ի՞նչ է, ասա դու։

[illegible]

**Սյուզաբե**

[illegible]

Ասում է՝ Լալան թող Չին չգնա, [illegible]



Իր մանկությունից սովոր է նրան,
Բաժանվելուց նուրբ հոգին կը դողա։

**Քեյխոսրով**

Թող մնա։

**Քոսակ**

(Խոնարհվելով)

Շնորհակալ եմ։

**Քեյխոսրով**

(Պասկևիչին)

Ինչ վոր բերել եք դուք մեզ արմաղան
Չարժե բոլորը մազն այս աղջկան։

**Սյուզաբե**

Նա շատ հաճելի մի ընկեր է ինձ,
Փայլուն մարգարիտ, չեղակի ու ջինջ։

**Քեյխոսրով**

Լավ, թող անունն էլ Վոսկեհատ լինի։

**Սյուզաբե**

Աղվես ծերունին էլ նուրբ ճաշակ ունի։

(Անցնում են մյուս սրահը)

**Քեյխոսրով**

Շատ զարմանալի։

**Սպասյակ**

(Մտնում է յեվ խոնարհվում)

Փեհլիվան Ռուստամ։

**Քեյքյավուս**

*Հրավիրիր ներս նրան։*

**Պատվիրակ**

*Թույլ տուր, արքա՛, յես գնամ։*

(Խոնարհվելով դուրս է գնում)

**Քեյքյավուս**

*Բարի ճանապարհ։*

(Մեկուսի)

*Այսքա՜ն շուտ ինչո՞ւ նա պիտի դառնա։*

**Ռուստամ**

(Ներս է մտնում Բեհրամի հետ: Զինվորական բարևից հետո

*Սալա՜մ...*

**Քեյքյավուս**

*Ի՞նչ յեղավ խաղը,*
*Ի՞նչ է վախճանը։*

**Ռուստամ**

*Բանակներն համառ*
*Զարկվեցին իրար։*

**Քեյքյավուս**

*Հետո՞։*

**Ռուստամ**

*Մեկ մեկ կռվի դուրս յեկան,*
*Կերշիվեզը՝ գլխիկոր,*
*Սեյավուշը՝ հաղթական։*



**Քեյքյավուս**

(Հպարտ յեվ գոհ)

*Կոչումն հերոսի հալալ լինի նրան։*

**Ռուստամ**

*Ծափահարեցին*
*Մեր Սեյավուշին*
*Վոչ միայն բարեկամ,*
*Այլ և թշնամին։*

**Քեյքյավուս**

*Հետո՞։*

**Ռուստամ**

*Փիրանը յեկավ և հայտնեց մեզ պարզ,*
*Վոր չեն ցանկացել մղել պատերազմ։*

**Քեյքյավուս**

(Ջղայնացած)

*Իսկ ո՞վ է յեղել հարձակվողն ստորը։*

**Ռուստամ**

*Մի խումբ ղաչաղներ, սոված ու տկլոր։*

**Քեյքյավուս**

*Հետո՞։*

**Ռուստամ**

*Վորպեսզի արյուն չհոսի իզուր,*
*Փիրան, Սեյավուշ գտան մի լեզու։*

Քեյքյավուս

*Ինչպե՞ս։*

Ռուստամ

*Հաշտվեցին։*

Քեյքյավուս

(Բարկացած)

*Հաշտվեցի՞ն։*

Ռուստամ

*Անիմաստ կռվի կա՞ արդյոք անուն։*

Քեյքյավուս

*Դավաճանությո՜ւն ... դավաճանությո՜ւն...*
*Եփրասյաբից է այս խարդախությունն։*

Ռուստամ

*Այդպես չէ յերբեք։ Ասպատակողներ,*
*Ճամբա կտրողներ, ճամբից շեղվողներ*
*Նրա՛նք էն միայն։ Մերոնք հարևան*
*Գյուղերում հանգիստ չթողին։ Կերա՛ն։*

Քեյքյավուս

*Ինձ ցավ չեն ազդում գյուղերն արյունլվա,*
*Միայն Եփրասյաբն իր չափն իմանա։*

Ռուստամ

*Առանց պատճառի այս կռիվը, ասեմ,*
*Մի ծանր հարված է հերոսության վսեմ։*



Քեյքյավուս

(Դառն յեվ հեգնական ծիծաղով)

*Յերկուսդ էլ վախկոտ, վախկոտ ու անբան,*
*Թե Սեյավուշը, թե դու՝ դավաճան։*

Սեյավուշ

(Խիստ յեվ վշտացած)

*Պիղծ զրպարտությո՜ւն ... վախկո՞տ, դավաճա՞ն,*
*Ո՞վ կը դիմանա այս անպատվության։*

Քեյքյավուս

(Գոռալով)

*Ռուստա՜մ...*

Ռուստամ

(Նույն տոնով)

*Սահմանդ ճանաչի՛ր,*
*Ինձ ի՞նչ կարծեցիր։*

Քեյքյավուս

*Լռի՛ր։*
*Համբավդ քեզ թող չգոռոզացնի։*

Ռուստամ

*Զգո՛ւյշ, մի հենվիր գահի ու թագի։*

Քեյքյավուս

(Ջղայնացած յերթեվեկելով)

*Ե՛լ կասկած չկա, վոր Սեյավուշն էլ*
*Քեզ է հարմարվել,*

Յերկուսդ էլ ըմբոստ, կատաղած գազան,
Ձեզ պատիժ մահվան։

(Առանից դուրս է գնում)

**Ռուստամ**

(Ցնցվում է։ Բեհրամին)

Զրպարտելը լսեցի՞ր,
Անվանարկումը զգի՞ր,
Ահա կատաղած մի գազան,
Գլխին՝ մահվան ուրվական։

**Բեհրամ**

Խելագարվի էլ — ի՞նչ տարբերություն,
Ավելի մեծ է քո ուժն ու անունը։

**Ռուստամ**

Լույսի պես պարզ է այժմ ինձ համար
Զաբելիստանը ջեննեթ է պայծառ,
Պետք է դառնամ յես իմ յուրդը նախկին,
Իմ առաջվա պերճ նամուսին, փառքին։

(Սյուդաբեն վարագույրի արանքից յերևում է ու յետ քաշվում)

**Բեհրամ**

Իսկ Սեյավուշը։

**Ռուստամ**

Վոչնչացում է վախճանը նրա,
Ճամբայից նրան յետ դարձրու հիմա,
Ինչ վոր տեսար դու, կը պատմես նրան,
Թող թողնի գնա այս յերկրից դաժան։



Կը ներկայանաք ճիշտ Եփրասյաբին,
Մորեղբայրն է նա, ինչ էլ վոր լինի,
Նրան այն յերկրում վնաս չեն հասցնի։

(Զղայնացած յեվ բարկացած)

Յեվ Սյուդաբեյի ամուսինն արքա,
Անձնատուր գինուն, խմի, հարբենա,
Յեվ արդարություն, որենք անվանի...
Ամեն զուլում լիրբ ու վոճիր լկտի։
Արի՛, հեռանանք, անեծք անպատում
Ահ ու սարսափին այս վոսկով ոծուն։
Ե՛լ բավական է, անեծք հոգեին
Մահվան շունչ փչող այս տափանքներին։

(Գնում են)

**Սյուդաբե**

(Վարագույրի յետևից դուրս է գալիս, դառն ժպիտով)

Գնա՛, Սյուդաբեն վորքան տվեց շատ
Առյուծներին քեզ պես քաջ,
Անթիվ հրաբուղխներ հանգան իմ առաջ
Սարսափի ու հաղթության։

(Խելահեղ նայվածքով հեռուները նայելով)

Սրտիս խորքերում, հեռո՛ւ Սեյավուշ...
Հնչում է, զրնգում նրա ձայնն անուշ։

(Ծայր աստիճան բարկացած)

Թեկուզ ինձանից փախչի էլ, գնա,
Դիակը պիտի գա ձեռների վրա։

**Վարագույր**

# ՅԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Տրչապատը լերկ ժայռեր, կանաչ դաշտեր: Հեռվից լսվում է հովվի սրինգի ձայնը:

**Սեյավուշ**

(Ներս է մտնում Բեհրամի հետ գլխին բռնգե սաղավարտ)

*Յերկիրն ահա մայրենի,*
*Ահա դաշտը Թուրանի։*
*Լերկ ժայռերի վրա՝*
*Արծվի բույնն ահա։*

**Բեհրամ**

*Նման պատկերներ Իրանում քիչ չեն,*
*Ավելի լավը տեսել, սխալ չեմ։*

**Սեյավուշ**

*Բայց Սյուդաբեյի սերը վայրենի,*
*Վոխերիմ մի նոր պատիժը մահի*
*Մեզ Թափառական դարձրին խղճալի։*

**Բեհրամ**

*Մոռացիր, ինչ վոր յեղել է, կանցնի,*

(Գրպանից մի թուղթ հանելով)



*Ուշադրություն մի՛ դարձնի,*
*Եփրասյաբը վողջ մնա,*
*Նամակը կարդա,*
*Ինչքա՛ն գոհ է նա։*
*Այստեղ էլ սարայ,*
*Այնտեղ էլ սարայ,*
*Ի՞նչ տարբերություն։*
*Այստեղ սեր, ներբող քեզ են սպասում։*

**Սեյավուշ**

*Սարայի կյանքի չունեմ ցանկություն,*
*Բոլորն արյունոտ բանտ, փայլուն վանդակ.*
*Մորեղբայրըս մեզ վոսկով էլ պատի՝*
*Դարձյալ ուրիշի բազուկների տակ*
*Ծանր է պահպանվել, ծանրը ու պատիր։*

(Նույն պահին լսվում է աղջիկների յերգի ձայնը)

**Աղջիկներ**

*Նազլի մի թռչուն, վարդ ու սպիտակ,*
*Լերկ ժայռերի վրա թառել է մենակ,*
*Վիզը ճինչպես, տես, հակել է կրծքին,*
*Ո՞ւմ է սպասում [illegible] նշանածին,*
*Սիրուն ու չքնաղ իմ լույս աղավնին։*

*Ահա սիրուն [illegible]*
*Նետեր ունեն, ունեն [illegible]*

**ՍԵՅԱՎՈՒՇ**

*Յերևում է, վոր վորսի են յելել։*
*Այս ճանապարհից քիչ պետք է քաշվել։*

**ԲԵՀՐԱՄ**

*Կնոջ ձայնն ինչ հոգեհըմա,*
*Ուրախ յերգը սիրտ կը բանա։*

**ՍԵՅԱՎՈՒՇ**

(Իմաստալից տոնով)

*Այո՛, կինն է մի արարած նրբին,*
*Յերբ ստորանա—առարկա չնչին։*

(Աֆրասյաբի աղջիկը՝ Ֆիրենկիզը յեվ նրա ընկերուհիները գալիս են յերգելով)

**ԱՂՋԻԿՆԵՐ**

*Իմ լույս աղավնին թև է բաց անում,*
*Ու բարձր ամպերին թռչում է, թռչում,*
*Պարելով թռչում, թռչում ու պարում,*
*Անհոգ ու անփույթ իմ լույս աղավնին,*
*Չի ուզում գալ ցած իմ լույս աղավնին։*
*Լինում է մի պահ, վոր ինձ լքում է,*
*Յեվ մի ծիծաղով ինձ վաճառում է,*
*Ու մեկ էլ տեսար՝ նշմարեց կրկին,*
*Վազեց ու յեկավ իմ լույս աղավնին,*
*Հոգեպարար իմ քնքուշ աղավնին։*

**ԱՌԱՋԻՆ ԸՆԿԵՐՈՒՀԻ**

*Ասում են, Ֆիրենկիզ,*
*Սեյավուշն է գալիս։*



**ՅԵՐԿՐՈՐԴ ԸՆԿԵՐՈՒՀԻ**

*Յես էլ եմ լսել, ով է իմանում։*

**ՖԻՐԵՆԿԻԶ**

*Ասում են թե նա հերոս է անհաղթ,*
*Փառքը դաստան է, անունը՝ հպարտ։*

**ԱՌԱՋԻՆ ԸՆԿԵՐՈՒՀԻ**

*Լսիր, Սյուդաբեն նրան է սիրում։*

**ՖԻՐԵՆԿԻԶ**

*Ասել է՝ մայրը սիրում է վորդուն։*

**ԱՌԱՋԻՆ ԸՆԿԵՐՈՒՀԻ**

(Շուրջը դիտելով)

*Կա՛ց, ի՞նչ բան է դա, մի մարալ մատղաշ։*

**ՅԵՐԿՐՈՐԴ ԸՆԿԵՐՈՒՀԻ**

(Նետն առնելով)

*Խրտնեցրել է նրան մահվան ահը մութ։*

**ՖԻՐԵՆԿԻԶ**

(Աղեղին նետ անցկացնելով)

*Կացե՛ք, հիմա նրան վողջ-վողջ բռնեմ յես*
*Շփոթվեց, փոխեց ճանապարհը, տե՛ս։*

(Արագ հեռանում են)

**ՍԵՅԱՎՈՒՇ**

(Մտնում է Բեհրամի հետ)

*Մեկը մեկից սիրուն, շքեղ։*

**Բեհրամ**

*Անշուշտ փերիներ սարայի վայել։*

**Սեյավուշ**

*Այն նուրբ ձայների յերգը վետվետուն*
*Հիշեցրեց ինձ մորըս՝ Թուրքեստանում։*
*Վորսորդներն այստեղ պատահել նրան,*
*Տարել են շահին իբրև արժաղան։*

**Թոռուն**

(Մտնում է աղեղով յեվ նետով մի յերիտասարդ, սպանված մի նապաստակ ձեռին)

*Բարի վողջույն։*

**Սեյավուշ**

*Բարի վողջույն,*
*Ի՞նչ է քո անունը։*

**Թոռուն**

*Թոռուն...*

**Սեյավուշ**

*Թախտն [illegible]*
*Դու՞ [illegible]*

**Թոռուն**

*Վո՛չ, շատ մոտիկ է։*

(Հեռավորության մի կետ ցույց տալով)

*Պաշարել են [illegible] մեզ։*



**Սեյավուշ**

*Կաց, տեսնեմ բախտն ինձ կը ժպտա՞ արդյոք։*

(Աղեղին նետ անցկացնելով՝ ժայռի տակ է մտնում յեվ անհայտանում)

**Թոռուն**

(Բեհրամին ձայն տալով)

*Աֆերի՜ն, աֆերի՜ն։*

**Բեհրամ**

*Ի՞նչ կա։*

**Թոռուն**

*Ընկերդ շուռ տվեց վորսը մեկ նետով։*

**Բեհրամ**

(Առաջանալով)

*Վարպետություն է դա քո կարծիքով։*

**Թոռուն**

*Քո կարծիքով վո՞չ։*

**Բեհրամ**

*Վո՛չ։*

**Սեյավուշ**

(Ձայնը)

*Ա՜հ։*

**Բեհրամ**

(Վազելով)

*Ասա։*

**Թոսուն**

Ընկերըդ վերք ստացավ։

**Բեհրամ**

(Մոտեցող Սեյավուշի թեվին նայելով)

Վիրավորվեցիր, տեսնեմ, ինչ եղավ։

**Սեյավուշ**

Մեկը քաջ վորսկան այն աղջիկներից
Նետով սայրասուր վիրավորեց ինձ։

**Բեհրամ**

Սաս ոչ, ավմեղ։

**Սեյավուշ**

(Աղջիկների հետ եկող Ֆիրենկիզին ցույց տալով)

Առաջից եկող այն փերին չքնաղ։

**Ֆիրենկիզ**

(Մոտենալով եվ սպանված մարալը Սեյավուշին երկարացնելով)

Վերցրու, քոնն է այդ, թեև իղձս էր վաղ
Խնայել, չսպանել մարալն այդ ուրախ։

**Սեյավուշ**

Բավ է ինձ քո այդ ընծան հոյակապ։

**Ֆիրենկիզ**

(Խուճապի մատնված ձայնով ընկերուհիներին)

Բերեք վիրակապ։



**Սեյավուշ**

Չարժե հուզվել դրա համար։

**Թոսուն**

(Վիրակապը տալով)

Ա՛ռ։

**Ֆիրենկիզ**

Բեր, յես փաթաթեմ։

**Սեյավուշ**

Վոչինչ, յես կանեմ։

**Ֆիրենկիզ**

Բեր, դարման դնեմ։

(Դեղ դնելով փաթաթում է)

**Թոսուն**

(Ոգևելով եվ իմաստալից տոնով)

Մեր յերկրի աղջիկերք
Տալիս են թե վերք
Թե կապում արագ։

**Սեյավուշ**

Նա թե հանդուգն է, թե գթով առատ։

**Ֆիրենկիզ**

(Նվաղուն նայվածքով)

Յես ուզում եյի վորսը վողջ բռնել,
Չը թողիր անել։

Սեյավուշ

*Մեղավոր եմ ավելի*
*Քան թե վորսկան քաջարի։*

Բեհրամ

(Ֆիրենկիզին՝ մի քիչ խիստ տոնով)

*Կտանայիր դու հարմար պատասխան*
*Թե չլինեյիր աղջիկ աննման։*

Սեյավուշ

*Ներողություն, Բեհրամ, քո խոսքն է մատնում։*

Ֆիրենկիզ

(Քմծիծաղելով)

*Անզորները միշտ ուժեղ են ճառում։*

Սեյավուշ

(Բեհրամին)

*Շատ սուր պատասխան,*
*Ցեվ հասկացողին*
*Արդեն բավական։*

Թուրան

*Եֆրասյաբն ահա վորոնում է վորս։*
*Վոչ վոք չի մնացել սարայում այսոր։*

Ֆիրենկիզ

*Վորսի՞ համար է շքեղանքն այսքան,*
*Վոչ, Սեյավուշին նրանք դեմ յելան։*



Առաջին ընկերուհի

*Այո, ճիշտ, իրավ։*

Յերկրորդ ընկերուհի

*Փիրանն էլ յեկավ։*

Ֆիրենկիզ

*Դե, գնանք մենք էլ դիտենք մի կողմից։*

(Ուզում է մի կողմ քաշվել)

Փիրան

(Ներս է մտնում)

*Սեյավուշ, վողջե՛,*
*Յեկել ես բարի։*

(Գրկում է համբուրում, իսկ Բեհրամին ձեռք է տալիս)

Ֆիրենկիզ

(Զարմացած)

*Միթե Սեյավուշն է։*

Փիրան

(Թեվի վիրակապը տեսնելով)

*Այդ ինչ է։*

Սեյավուշ

*Թեվըս քերծվել է։*

Թուրան

*Մեր յերկրի աղջկերք*
*Տալիս են թե վերք,*
*Թե կապում արագ։*

Բեհրամ

*Բան չէ, մի կատակ։*

Փիրան

(Պատանիներին Սեյավուշին է ցույց տալիս)

*Վողջ սարայը, տես,*
*Ընդունում է քեզ։*

Սեյավուշ

*Շնորհակալ եմ։*
*Քիչ չէ յեղել ձեր շնորհն ինձ համար,*
*Սեյավուշն արդյոք արժանի՞ է հար։*

Փիրան

*Բոլոր սրտերը քեզ հարգ են տածում,*
*Զնգում է անունդ Ալթայ լեռներում։*

(Մտնում է Էֆրասյաբը պալատականների հետ)

Փիրան

(Սեյավուշին)

*Քեռիդ, Էֆրասյաբ, փառապանծ խագան[1]։*

(Էֆրասյաբին)

*Սեյավուշ, վորդիդ, հայտնի ղահրաման[2]։*

Էֆրասյաբ

(Սեյավուշին գրկում, համբուրում է)

*Բարի ես յեկել,*

---

1) *Խագան—կայսր։*
2) *Ղահրաման—հերոս։*



*Այս յերկրին բերել*
*Բերկրություն անուշ,*
*Հերոս Սեյավուշ։*

Բոլորը

*Յաշա՜, բյուր յաշա՜...*

Էֆրասյաբ

(Իր շուրջն յեղողներին)

*Բազեյի ձագը իմ քրոջ ահա*
*Թիթեռն հաղթության աչքում կը շողա։*

Սեյավուշ

*Յեթե հորիցը փախչի իր վորդին,*
*Մի բույն կը գտնի մոր գրկում ջերմին։*

Էֆրասյաբ

*Հայրենի ոջախ մեր Իրանը քեզ՝*
*Յեվ մայրական գիրկ յերկիրն արևկեզ,*
*Թե նայի հայրը խեթ աչքով վորդուն,*
*Բաց է մոր գիրկը՝ հավիտյան հորդուն։*

Գերսիվեզ

*Ժողովուրդն անահ այս հայրենիքի,*
*Ջրերը վրնջուն, գետերը վարար,*
*Սպասում են քեզ ձագերը արծվի,*
*Որերը փառքի կարոտում քեզ հար։*

Վարագույր

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Եֆրասյաբի սարայում Թուրանական ճաշակով զարդարված մի սրահ:

**Եֆրասյաբ**

*Սեյավուշն ապրի...*
*Սիրահարվեցի*
*Յերեկ յես նրան,*
*Ռազմի գիտության*
*Ձևերին բոլոր*
*Նա տեղյակ է խոր։*

**Փիրան**

*Նրան իր գրկում քուրդ է սնուցել,*
*Յեվ քաջ Ռուստամից մարզանք է ուսել։*

**Եֆրասյաբ**

*Ինչքան հնար է՝ շահիր սիրտը նրա,*
*Հինգորն ապրի խոշ,[1]) անցյալը մոռնա։*

**Փիրան**

*Թե Սեյավուշը Ֆիրենկիզի հետ*
*Միանա սիրով, կը միաձուլվեն*
*Յերկրները մեր յերկու առ հավետ։*

1) *Արևելյան ասացվածք է սա։ «Հինգ օրը» պարզապես կյանքն է։*



**Կերսիվազ**

(Լսելով վերջին խոսքերը, հեգնանքով)

*Մտատանջություն...*
*Այո, շատ սիրուն։*

**Եֆրասյաբ**

*Տեսնել է իմ դստրիկին*
*Սեյավուշը թանկագին։*

**Փիրան**

(Ձեռքով ժխտական նշան անելով)

*Յերբեք։*

**Եֆրասյաբ**

*Ուրեմն դու նրանց միտքը իմացիր։*

**Կերսիվազ**

(Դառն յեվ հեգնական ծիծաղով)

*Դեռևըս շուտ է, քիչ սպասեցեք*
*Քաջ Սեյավուշը մանուկ չէ յերբեք,*
*Թե քաղաքական մի գործ չըլիներ*
*Չեր լքի օջախն, հայրենի տները։*

**Եֆրասյաբ**

*Անտեղի կասկած...*
*Յեվ նախ և առաջ*
*Կասկածելը քո*
*Բնույթն է յերկրորդ։*

**Փիրան**

*Սխալվում ես դու, Սեյավուշը քաջ*

Ամեն տեսակի խարդախությունից
Հեռու է կանգնած։

(Փիրանը յեվ Եֆրասյաբը գնում են)

**Կերշիվեզ**

Տես, ինձնից առաջ ով է ցանկանում
Գահը ժառանգել, վոչ նա իր որում
Չի կարող տեսնել գահը Թուրանում։

(Դուրս է գնում)

Ֆիրենկիզը ներս է մտնում ընկերուհիների հետ։

**Առաջին ընկերուհի**

Ո՜, Ֆիրենկիզ, Ֆիրենկիզ,
Ասա, ի՞նչ է յեղել քեզ
Վո՞ր փոթորիկը հրկեզ
Հալածում է, այրում քեզ։

**Յերկրորդ ընկերուհի**

Քո աչքերում կա ինչ վոր դառնություն,
Սեյավուշի՞ց է տանջանքըդ հոգուն։

**Ֆիրենկիզ**

Նա մի աստղի պես կաթեց սրտիս մեջ,
Մի հրե ծաղիկ դրեց հոգուս մեջ.
Խլեց ինձանից համբերանք ու քուն
Բոցի ալիքներ փաթթեց իմ հոգուն,
Բաբախող սրտիս հասե՛ք ոգնության,
Բացե՛ք ցավերըս, պատմեցե՛ք նրան։
Վո՛չ, մի՛ բաց անեք, վո՛չ, ե՛ս չեմ ուզում,
Գուցե նա հիմա մեկին է սիրում։



**Առաջին ընկերուհի**

Վո՛չ, դու ես նրա իղձերի փերին։

**Յերկրորդ ընկերուհի**

(Դեպի դուռն է նայում, ընկերուհուն)

Լավ է մենք գնանք, յեկավ քաջարին։

**Առաջին ընկերուհի**

Վստահ յեղիր դու՝ առիթ այսպիսի
Ե՛լ ձեռք չի անցնի։

**Ֆիրենկիզ**

Ի՞նչ ասեմ, չեմ իմանում։

**Յերկրորդ ընկերուհի**

Քաջասրտությո՜ւն...

(Վարագույրի յետեվ են թաքնվում)

**Ֆիրենկիզ**

(Ձեռքը ճակատին, շփոթված)

Խոսքերըս բոլոր մտքիցըս թռա՜ն։

**Սեյավուշ**

(Մտնում է, սիրավառ)

Դո՞ւ ես ... վերջապես աչքերս ժպտեցան։

**Ֆիրենկիզ**

Վերքըդ ի՞նչպես է։

**Սեյավուշ**

Դեռ բոլորովին ապաքինած չէ։

**Ֆիրենկիզ**

(Նրա բեվին է նայում, յերկդիմի ծիծաղով)

*Ո՞ւր է, վո՛չ մի հետք։*

**Սեյավուշ**

*Սրտումս է հետքը, աչքերից անտես,*
*Միշտ կսկծում է, յերբ մենք, դու և յես,*
*Տեսնում ենք իրար։ Մի անգամ տեսա*
*Քեզ վորսի դաշտում, կորցըրի ապա,*
*Յերբ աղջիկները մոտենում են ինձ,*
*Ի՞նչ է պատճառը, դու փախչում ես միշտ։*

**Ֆիրենկիզ**

(Նվաղուն նայվածքով)

*Փախուստն էլ, գիտցի՛ր, մի կերպ մեձեցման։*
*Նուրբ ճանապարհն է սիրող աղջկան։*

**Սեյավուշ**

*Յեթե այդպես է, յես եմ բախտավոր։*

**Ֆիրենկիզ**

*Բախտավո՞ր։*

**Սեյավուշ**

*Այո։ Ինձ ասա, ծաղի՛կ հոտավետ,*
*Դու վորևէ կապ ունե՞ս շահի հետ։*

**Ֆիրենկիզ**

*Յես մի հյուր եմ լոկ այս սարը բնում,*
*Յեվ քոչելու եմ մոտ ժամանակում։*



**Սեյավուշ**

*Ո՞ւր, ասա, տեսնեմ։*

**Ֆիրենկիզ**

*Յես էլ չգիտեմ։*

**Սեյավուշ**

*Սա հանելուկ է անըմբռնելի,*
*Յեթե մի կռունկ ճանապարհ ընկնի,*
*Բնից հեռանա թե մի աղավնի,*
*Նույն յերեկոյան մի բույն կը գտնի։*

**Ֆիրենկիզ**

(Ծիծաղում է, նշանակալից ձևերով)

*Կասկածելի է այդ բույնն ինձ համար։*

**Սեյավուշ**

*Խոսքերըդ այլ են և աչքերըդ՝ այլ։*

(Ուզում է ձեռքերը բռնել)

**Ֆիրենկիզ**

(Վարագույրի յետև է քաշվում)

*Կարծես գալիս են, տեսնվենք հետո։*

**Սեյավուշ**

(Աչքերով հետևում է. հուզմունքով)

*Չը հավանեցա ամեն գեղեցկի,*
*Շատերի վրեժին յես զոհ գնացի,*
*Չիմացա՝ մի որ հոգիս կը գերվի*
*Աչքերին բոցեղ հպարտ բաղեյի։*

Քայլելիս, կարծես, նազանք է անում
Մով յերկինքներին ջինջ ու անպատում,
Չարժե՞ ծնկի գալ նայվածքին շողուն։

(Մտնում են Աֆրասյաբը, Փիրանը, Կերսիվեզը յեվ Թուսունը)

Արծիվը գերվեց մի աղավնուց հեզ,
Գեղեցկությամբ նրա ու սիրով հրկեզ։

**Աֆրասյաբ**

Ինչո՞ւ տխուր ես, ասա, իմ վորդի։

**Սեյավուշ**

Սարայի կյանքից արդեն հոգնեցի։

**Փիրան**

Քեռիդ ուզում է քեզ ուրախ տեսնել,
Հենց այստեղ էլ քեզ, վորդյա՛կ, պսակել։

**Սեյավուշ**

Խազանն ամենքին թող հրամայի,
Իրավունք ունի,
Բայց Սեյավուշի հոգուն հրամայի,
Իրավունք չունի։

**Կերսիվեզ**

Գուցե Իրանում սիրում է մեկին։

**Սեյավուշ**

Ներեք։



**Աֆրասյաբ**

(Թուսունին)

Մեր Ֆիրենկիզին այստեղ կանչեցեք,
Յեթե հոժար է, վաղն իսկ հարսանիք։

**Փիրան**

Բոլոր աղջկերանց աչքն է Ֆիրենկիզ։

**Սեյավուշ**

Վո՛չ վոք չի տիրել դեռևս իմ սրտին,
Մի վորսորդ աղջիկ դաշտում յես տեսա,
Վոր մի նայվածքով դյութեց իմ հոգին,
Թևիս վրա է հիշատակը նրա։

**Աֆրասյաբ**

Մեր բոլոր աղջկերք թող ներկայանան։

**Փիրան**

(Ձեռքով նշան է անում)

Դա լավ է, խազա՛ն։

**Կերսիվեզ**

(Մեկուսի)

Ա՜հ, թե սիրածըն է Ֆիրենկիզը,
Սարսափելի է, կտրվեց իմ վիզը։

(Ներս են մտնում աղջիկներ)

**Աֆրասյաբ**

(Սեյավուշին)

Վո՞ր մեկն է, ասա։

ՍԵՅԱՎՈՒՇ

(Ֆիրենկիզը ցույց տալով)

*Ահա։*

ԷՖՐԱՍՅԱԲ

(Գոհունակությամբ)

*Ֆիրենկիզ, դուստր իմ։*

ՍԵՅԱՎՈՒՇ

*Կարծեցի հյուր է նա այս սարայում։*

ԷՖՐԱՍՅԱԲ

*Սխալմունքն էլ մի զարդ է անպատում։*

ՓԻՐԱՆ

*Բոլորս էլ հյուր ենք այս կյանքի բեմում։*

ԷՖՐԱՍՅԱԲ

(Ֆիրենկիզին)

*Դու էլ սիրտըդ բաց։*

ՖԻՐԵՆԿԻԶ

*Իմ փոխանորդը դուք եք անկասկած։*

ԷՖՐԱՍՅԱԲ

*Ապրե՛ս, դու տվիր սիրուն պատասխան։*

(Գրկում է, հետո վեզիրին)

*Բախտ բերող են քո ձեռները, Փիրա՛ն,*
*Փոփոխի՛ր սրանց կապերը բազկի,*
*Նշանդրեքն այսպես հիմա կատարվի։*



ՓԻՐԱՆ

(Սեյավուշի թևի կապը հանելով անցկացնում է Ֆիրենկիզի թևին, իսկ Ֆիրենկիզինը՝ Սեյավուշին)

*Ահա փարատվեց մշուշն անհարկու.*
*Գրկեցին իրար աստղերը յերկու։*

ԳԵՐՍԻՎԵԶ

(Թոսունին, քինոտ)

*Ո՛չ, չի կարելի այս բանը անել,*
*Անիծյալ բույնն այս պետք է խորտակել։*

ԹՈՍՈՒՆ

*Միտքդ ի՞նչ է, ասա։*

ԳԵՐՍԻՎԵԶ

*Ժամանակը քեզ պատասխան կտա։*

ՓԻՐԱՆ

*Ծափի արժանի ահա մի արարք։*

ԷՖՐԱՍՅԱԲ

*Տալ Սեյավուշին խալաթներ ու թագ։*

ՍԵՅԱՎՈՒՇ

*Ո՛չ, պարզությունն է ինձ հաճո ու թանկ,*
*Այնտեղ ունեյի ես խալաթ ու թագ,*
*Բոլորը թողի, բնությանս դուր չեկավ։*

ԷՖՐԱՍՅԱԲ

*Եվ միթե՞ թագը անիծված բան է։*

**Սեյավուշ**

*Նեղում է վորպես մի շղթա վոսկե։*

**Եֆրասյաբ**

*Մի բարձըր պաշտոն խնդրիր ինձանից։*

**Սեյավուշ**

*Վո՛չ, դուր չի գալիս պաշտոնը սրտիս։*

**Փիրան**

*Ռազմիկ լինելըն ավելի խոշ է։*

**Եֆրասյաբ**

*Չինի սահմանը ուղարկեմ յես քեզ,*
*Մի մեծ վիլայեթ ապստամբվել է,*
*Ցեվ խեղդըվում է կարմիր արյան մեջ։*

**Սեյավուշ**

*Կարմիր արյա՞ն մեջ։ Առանց պատճառի՞։*

**Եֆրասյաբ**

*Վո՛չ վոք չի առնում հրամանս հաշվի։*

**Սեյավուշ**

(Հպարտ)

*Ալիքն այդ արյան ամիս չի տևի։*

**Գերսիվեզ**

(Մեկուսի)

*Քո դիակն այնտեղ՝ հողում կը թաղվի։*



**Փիրան**

(Ձեռը դնելով Սեյավուշի ուսին)

*Կը հանգեցնե մեր Սեյավուշը*
*Այնտեղ բռնկած այդ խաժամուժը։*

**Եֆրասյաբ**

(Աղջկան նայելով)

*Ֆիրենկիզն արդյոք ի՞նչ ունի՞ ընդդեմ։*

**Ֆիրենկիզ**

*Յեթե յերկու սիրտ մեկ են բաբախում,*
*Նրանց իղձերն էլ մեկ են անդադրում։*

**Եֆրասյաբ**

*Ցեղեք միասին,*
*Իմ զույգ թանկագին։*

(Գնում են)

**Առաջին վեզիր**

*Քո կարծիքն ի՞նչ է։*

**Յերկրորդ վեզիր**

*Ժամանակի խնդիր է։*

**Գերսիվեզ**

*Ծափի արժանի մի նշանդրեք...*
*Վո՛չ, կարելի չե, սա մի գործ է նենգ,*
*Բույնն այս անիծված պետք է մենք քանդենք։*

Վարագույր

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Չինաստանի սահմանում թուրանական յեվ չինական ճաշակով զարդարված Վալիի սարայը

**Վալի**

(Խառնում է հաստ բեխերը, մատները առաջ մորուսի մեջ մխրճելով մտածում է, ներս մտնող գայլի աչքերով խորհրդականին)

*Ի՞նչ կա, ի՞նչ չկա։*

**Խորհրդական**

*Վողջ մեր Վալին, յերկրում ամենուր*
*Ուրախություն է այսօր ընդհանուր։*

**Վալի**

*Քո տաղանդը մեզ հայտնի է, քեզ պես*
*Չըկա խորամանկ պետական աղվես։*

**Խորհրդական**

*Վո՛չ, և մի կարծիր ժողովուրդը մեր*
*Համաձայն է մեզ,*
*Հպատակվում են հիմա բոլորն էլ*
*Սեյավուշին վես։*
*Ալթայն ավազակ, գտնելով առիթ,*
*Ղեկավարում է*



*Դավաճաններին, ապստամբներին,*
*Իր հետ է տանում*
*Ավազակներին, իսկ մեմուրներին[1])*
*Բանտերն է նետում։*

**Վալի**

*Այդ իրավունքն ով տվել է լրբին։*

**Խորհրդական**

*Ապավինել է կայսեր[illegible],*
*Սեյավուշն է նրանց քաջալերել, այլ կերպ*
*Այդ հանդգնությամբ մեջտեղ չէր [illegible]*
*Ապստամբության [illegible] այս հիմարին*
*Ինչպե՞ս է կարդում մեզ հրավեր անկար։*

**Վալի**

*Անուշ լեզվով նրան պետք է գրավել*
*Մի պատրվակով [illegible] կախել։*

**Խորհրդական**

*Կախելը ճիշտ չէ, լավ է գիշեր մի*
*Անկողնում խեղդել անաղմուկ, գաղտնի։*

(Նույն պահին զինված զինվորական պաշտոնյաներ ներս են բերում վրա—գլուխը պատառոտած ապստամբ գյուղացիներին։ Նրանց մեջ կան յեվ յերկու կանայք։ Միայն նրանց առաջից յեկող յեվ խիստ նայվածքով Ցալչրնը, վոր կանգնում է մի անկյունում, լավ է հագնված)։

**Վոստիկան**

*Յեկե՛ք, շո՛ւտ։*

(Ցալչընի օձիքից բռնելով քաշում է)

*Յեվ դո՛ւ։*

1) *Մեմուր—պետական պաշտոնատար։*

Ցայլըն

(Բարկացած)

Թող։

Վոսիկան

Կատաղածնե՛ր։

Ապստամբներ

Մենք կատաղած չենք։

Վոսիկան

Ապա ո՞վ։

Ապստամբներ

(Պաշտոնյաները ցույց տալով)

Նրանք։

Վալի

(Կանանց ցույց տալով)

Սրանք էլ են ապստամբ։

Ցայլըն

Իրավամբ՝
Թավունի[1]) դիմաց բոլորս մեկ ենք։

Վալի

Թավո՞ւն։

Ցայլըն

Թավունից էլ վատ, ժավունից էլ մութ,
Մահից ավելի ահեղ ու անգութ։

1) Թավուն—ժանտախտ։



Վալի

Ի՞նչ է անունը այս աննամուսին։

Վոսիկան

Ցայլըն, նոր հարսի նոր ամուսինը։

Վալի

Կարծող է մնալ խենդն այս անշղթա։

Ցայլըն

Վա՜յ թե ինձ, այլ քեզ [illegible]

Վալի

Մի խոսեցնեք, նետեցեք զնդան։

Ցայլըն

Դու անխիղճ գազան։

Վալի

Լռեցրեք։

Վոսիկան

Չեմ։

Վալի

Թող բարձրանան կախաղան այսօր։

Ցայլըն

Ստո՛ր։

(Վալիին)

Դու էլ վաղը մեզ կանես թամաշա։

Կոստիկան

(Հարվածում է մտրակով)

Ցաշմ։

(Քշում է նրանց)

Վալի

Նրա հետքը նախ կորցրեք, գնա։

(Խորհրդականին)

Աչքերդ լցվեցին շփոթով, ի՞նչ կա։

Ի՞նչ [illegible]

Խորհրդական

(Մի կողմ [illegible])

Բավական սուր [illegible]ծքը, ավաղ։

Վալի

(Հարսին մոտենալով)

Քո աչքերում կա բարկություն, ցասում,
Մինչև դու չընկնես հոմար իմ գրկում,
Մարդըդ կը մնա կարոտ քեզ՝ բանտում։

Հարսը

Իմ հարսի քողը վո՞չ թե դու, այլ նա,
Ցալչընը միայն պետք է, որ բանա։

Վալի

(Թևից բռնելով)

Մոտ արի։



Հարսը

(Ետ քաշվելով [illegible])

Զզվելի՜։

Խորհրդական

Կուսությունն ամեն մի նորեկ հարսի,
Բալամ, բաժինն է ամեն մի ռեսի,
Քեզ համար [illegible]
Թե լավ մտածես — չես արհամարհի։

Վալի

Որենք [illegible]
Հարազատներին [illegible] սգի·
Նա[illegible] ամբողջ մի գիշեր,
Մի [illegible] կը լինի ավեր։

Հարսը

Սիրտս իմ բոլո՛ր խորհուրդներին
Հաճոյասփյուռ մի կրակ չէ,
Իմ սերս ամեն մի շվաքի
Շողշողացող մի արև չէ։
Ծիծաղելի իմ կույր բախտից
Հանգած-մարած ահ մնաց ինձ,
Մի փոթորիկ գոռ բարձրացավ,
Կյանքըս յեղավ փքաչըրավ։

(Լաց է լինում)

Վալի

Ուզում ես ժպտա, կամ լաց յեղիր դու,

Մինչև չլինես կրքիս անձնատուր,
Ձեռք ազատվելու իմ ճանկից անհեղ
Վո՛չ դու, վո՛չ էլ քո նշանածն ջահել։

**Հարսը**

(խիստ)

Անկարելի է այդ, դու չես տեսնի,
Իմ պատիվը չի մի գարշ ցնցոտի։

**Վալի**

(Գոռալով)

Այս լրբությունը էլ բավական է։

(Խորհրդականին)

Բա՛ց վարագույրը ու ցույց տո՛ւր սրան
Տեսնելով, գուցե, քիչ խելք գա վրան։

(Բաց է անում վարագույրը: Հեռվում ծով յեվ առագաստանավեր, մի կողմ լեռներ, շատ մոտիկ կախաղանի վրա, յերեսը դեպի մյուս կողմը շուռ տված, սպիտակ շապիկ հագած մի դիակ)

**Հարսը**

(Իր նշանածը կարծելով)

Դա Յալչ՞ընն է, ա՜հ, Յալչը՜ն...
Ի՞նչ սարսափ է։ Առանց քեզ
Անեծք կյանքին այս դառըն։

(Ուշաթափ ընկնում է)

**Ոստիկան**

Նշանածըդ չէ, վո՛չ, սխալվում ես,
Նա հեծեծում է մութ բանտում անտես։



**Վալի**

Խեղճը ... Ահա վերջացավ։
Մի ակնթարթ ... ու հանգավ։

(Դիակի վրա մի ծածկոց են գցում, դրսից լսվում են ահարկու ձայներ)

Ա. Ձայն — Ո՞ւր է, ասացեք, գողերի մեծը։
Բ. Ձայն — Բավ է, չենք տանի մենք նրա պեսը։
Գ. Ձայն — Վորտե՞ղ է թագնվել այդ լիրբ սրիկան։
Դ. Ձայն — Թող գա հրապարակ, ցույց տանք
մենք նրան։

**Վալի**

Ովքե՞ր են դրանք։

**Խորհրդական**

Թշվառնե՞ր անսանձ...
Ուզում են լուծել քեզանից վրեժ։

**Վալի**

Ի՞նչ օգուտ կա այս կատաղածությունից,
Խելագարվե՞լ է ամբոխը այդ պիղծ։

(Աղմուկով ներս են թափվում բուրանական յեվ չինական տարազով մի խումբ ապստամբներ: Պարզ հագնված Սեյավուշն ու Բեհրամը մի կողմն են կանգնած: Առաջ է գալիս բխաղեմ Ալբայը)

**Ալբայ**

Այն դավաճանը այստեղ է ահա։

**Ապստամբներ**

Այս հայրենիքին թշնամի է նա։

**Ալբայ**

Պետք է վոր գտնի պատիժը իսկույն։

**Ապստամբներ**

*Վոչընչացնել մի ակնթարթում։*

**Վալի**

*Դժվեր ես դու, կատաղած։*

**Խորհրդական**

*Նա հիմար է ու ցնդած։*

*Նրա ուղեղից ծագեց հիմարությունն այս։*

**Խորհրդական**

*Նա ղեկավարն է սրանց։*

**Ալթայ**

*Բավ է, սպառվեց համբերանքը մեր։*

**Ապստամբներ**

*Բավ է, սպառվեց համբերանքը մեր։*

**Ալթայ**

*Վոտնահարվեց մեր պատիվը, իրավունք։*

**Ապստամբներ**

*Վոտի տակ առան պատիվ, իրավունք։*

**Վալի**

*Ցես չեմ հեռանում արդարությունից*
*Ու որենքից սուրբ։*

**Ապստամբներ**

*Անտանելի սուտ։*



**Ալթայ**

(Ցույց տալով կախաղաններ)

*Քո արդարության պատկերը մթին,*
*Մորթոտել ավիր հեգ ստվածներին։*
*Մի կողմից յերաշտ, մյուս կողմից եվ՝ դու,*
*Խեղճ ժողովրդին խմեցրիք արյուն,*
*Ցերկիրն ավերակ, ճրագներն հանգած,*
*Տները դարձան խոնավ գերեզման,*
*Տուրքի անունով մեզ թալանեցիք,*
*Ցուրաքանչյուր որ սրի մատնեցիք։*

**Վալի**

*Պետությունը, լսե,*
*Առանց յեկամտի*
*Հիմքից կը քանդվի։*

**Ապստամբներ**

*— Թող քանդըվի։*
*— Թող վոչնչանա։*
*— Բավ է, թող գնա։*

**Մի Զինվոր**

*Այս ժողովուրդը դուք միշտ կարծեցիք*
*Լոկ մի խաղալիք,*
*Ցեվ պետությունը ճնշել է միայն*
*Զանգվածները լայն։*

**Ցայչըն**

(Մտնելով)

*Ահա յես...*

Վալի

Ո՞վ բաց թողեց քեզ։

Յալչըն

Ի՞նչ, խաղալի՞ք ես կարծում, դու, անմիտ,
Զայրույթով լցված հորձանքն այս անվախ։

Վալի

Ապստամբությո՜ւն մեր պետության դեմ,
Լռի՛ր, ասում եմ։

Յալչըն

Վայրենությունը քո մեզ ծանոթ է։

Ալթայ

(Զայրացած, նրա դիմացն անցնելով)

Տուն քանդեցիք արդարություն ասելով,
Գավ մատուցիք ժողովրդի արյունով,
Ագռավի պես դիակներին թառեցիք,
Արդարության օրենքներից խույս տալով,
Ժողովրդի նամուսը սին կարծեցիք։
Քաշած շնչները հառաչ են թունոտ,
Մանուկներ նոթի լոկ ուտում են խոտ։
Ա՞յս արդարությամբ ես հպարտանում։
Սա պետություն չէ—խայտառակ, անլուր,
Զազիր, քստմնելի, ամոթ անպատում։

Վալի

Չի անպատվել ինձ դեռ վո՛չ վոք այսպես,
Գիտցի՛ր սահմանըդ, դու ի՞նչ ես, ճվ ես։



Ալթայ

Խավարը ճեղքող մի կայծակ եմ յես,
Թշվառի կամքի յես ծնունդ նորոմ վես։

Վալի

(Գլուխը շարժելով, դառն ծիծաղում է)

Հա՛, հա՛, Ալթայն ես, համբավըդ գիտեմ,
Քո ուժը մեծ է, հզո՛ր ու վսե՛մ։

(Ժողովուրդը ցույց տալով)

Ափսո՜ս, ո՜, ափսո՜ս այս հիմարներին,
Բոլորն ապստամբ ու դավաճան սին։

Սեյավուշ

Այս անուններն միայն վայել են
Քեզ պես Վալիին։

Վալի

Յես ձում դեմ, սամ, ապստամբեցի։

Սեյավուշ

Ամեն բանի—
Իրավունքի,
Արդարության
Ու մարդկության,
Պատվի, խղճի,
Ու անձնական
Արժանիքի։

Վալի

Ընկերացել ես դու այս գողերին,

Ուզում ես կոտրել ինձ, մեծ Սարդարին։
Թուրքն ու մոնղոլը, նույնիսկ չինացին՝
Շփացած, քեզ հետ դաշինք կնքեցին,
Այն փուճ չինացին, դեռ յերեկ գերի,
Մեզ դեմ ատամ է կրճտում հիմի։

**Ալթայ**

Բոլորն էլ նոթի, բոլորն էլ թշվառ,
Լինի թուրք թե չին, կամ այլ մի չվառ։

**Սեյավուշ**

(Դառն ծիծաղով)

Ձեր նայվածքը աղվեսի
Ատելությամբ վորքա՜ն լի։

**Վալի**

(Զղայնացած)

Քո հերոսությամբ մի հպարտանա,
Ահեղ կը կլինի պատիժըդ հիմա։

**Սեյավուշ**

Փակի՛ր բերանըդ, անարգ դու ճճու։

(Ապստամբներին)

Կապեցեք ձեռքը, կտրեցե՛ք լեզուն։

(Ապստամբները քանդում են Ցալչընի յեվ ընկերների շղթաները յեվ կապում են Վալիին ու խորհրդականին)

**Զինացի**

Արդարություն գոռացող անարդարի վախճանը։



**Ցալչըն**

(Ցույց տալով կախաղանը Վալիին)

Շատ ստորացավ այս դավաճանը,
Վեր բարձրացնենք—դեպ կախաղանը։

**Սեյավուշ**

Զգո՛ւյշ, թե նրան կախենք այդ սյունից
Կը թունավորվեն ագռավները պիղծ
Նրա դիակից։
Նրան վայել է յերկաթյա վանդակ,
Ամեն մի անցորդ առնի որինակ։

**Զինացի**

Ալթա՛յ, այս յերկրին նոր հոգի տվիր,
Փշրեցիր բռնության արձանը գազիր։

**Ցալչըն**

Փա՛ռք քեզ, հազար փառք քեզ ծնող ցեղին,
Փա՛ռք քո սնուցած մեծ զգացումին։

**Ալթայ**

Դուք շատ տնքացիք շղթաների տակ

(Ցույց տալով Վալիին)

Նույն հաճույքից սա թող առնի ճաշակ։
Լեռներին այս վեհ, դաշտերին անդորր
Չի կարող յերբեք վո՛չ մի սինլքոր
Դավաճան լինել այս իսկ որվանից,
Արդեն լսել են կույր բույերը պիղծ։
Սրանից հետո հայրենիքը մեր

Ել չեն կոխոտի ծույլ ու հարբածները։
Վո՜չ, յերջանկության շփացած փերին
Ե՛լ չի ծիծաղի գորշ սարուկներին։
Յեղե՛ք բռնության դեմ հպարտ, հանդուգն,
Նրան դուր կգա, մի՛ մոռանաք դուք,
Ճակատը բարձր, բազուկը անգութ։

**Վարագույր**



## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Նույն բեմը։ Իրիկվա դեմ։ Ցեխի վարագույրները բաց են։ Կախադանի վրա խոշոր լապտեր է կախված։ Դրսում պարում են խելահեղ ուրախությամբ լավ հագնված բուրանցի, մոնղոլ, չինացի աղջիկներ յեվ յերիտասարդներ։ Ֆիրենկիզը դիտում է նաժիշտների հետ միասին բաց պատուհանից։

**Սեյավուշ**

(Ներս մտնելով)

*Աչքդ լույս։*

**Ֆիրենկիզ**

*Ի՞նչ կա, Սեյավո՛ւշ։*

**Սեյավուշ**

*Հորեղբայրդ ահա։*

**Ֆիրենկիզ**

*Կերչիվե՞զը,*

(Դեպի դուռն առաջանալով, ներս մտնող Կերչիվեզին)

*Գալուստդ բարի։*

**Կերչիվեզ**

(Գրկելով յեվ ճակատից համբուրելով)

*Ֆիրենկի՛զ։*

Ֆիրենգիզ

Հայրս մեզ ինչու
Չեղավ այցելու։

Կերիմբեգ

Նա չէր իմանում, վոր տոն է այսօր,
Նա չեկավ, բայց դուք կերթաք նրա մոտ։

(Չորս կողմը նայելով)

Ի՞նչ չքնաղ տեսիլ, ի՜նչ ծով է անդորր։

Սեյավուշ

Մի երկիր առանց ծովի մի վանդակ,
Բանտ առանց ոդի, խուլ ու դժնդակ։

Կիրիմբեգ

Տես տղամարդիկ և հարսներ չքնաղ
Ցնծում, ծիծաղում, պարում են ուրախ։

Սեյավուշ

Փառապանծ մի որ
Ու տոն բախտավոր։

Ֆիրենգիզ

Ժողովրդի տոն, ազատության որ։

Բեհրամ

Մի տարի առաջ դժբախտ այս երկրում,
Խառնակություն էր, ապստամբություն։

(Սեյավուշին ցույց տալով)

Նա տվեց երկրին նոր վոգի, ավյուն։



Կերիմբեգ

Լսեցի համբավդ բոլոր վայրերում,
Հաղթությանդ երգը բոլորն են երգում։
Ուզում եմ լսել, եթե հնար,
Քո իսկ բերանից պատմությունն արդար։

Սեյավուշ

Այս հայրենիքը երբ ես նոր եկա,
Ապստամբություն էր ու սով ագահ;
Պատժեցինք արդեն բոլոր դավաճան
Պաշտոնյաներին, վերջ խառնակության։
Գյուղերը, տես, նոր կյանք ստացան։
Այս բանը տեսնող հարևանը չին
Խումբ-խումբ մեզ եկան, եկանք միասին։

Կերիմբեգ

Ապրես, իմ ազիզ, վարպետություն մեծ,
Վողջ մնաս, հազար ապրես ու փառք քեզ։

(Ձեռք սեղմելով, կասկածելի նայվածքով)

Պետք չէ վստահել չին ժողովրդին,
Խարդախ են նրանք, խորամանկ նրբին։

Սեյավուշ

Վո՛չ, սխալվում ես, բոլորն էլ փախած
Չինու խագանից
Գյուղացիներ են չքավոր, սոված։

Կերիմբեգ

Խարդախություն է, դու ինձ հավատա,

Նրանք օտար են մեզ, մի՛ մոռանա.
Ամեն կատաղածին
Մի հավատարացրու
Ամեն թուրանցու։

**Սեյավուշ**

(խիստ յեվ խրոխտ)

Դեմ եմ հոգևին
Այդ գաղափարին։

**Կերսիվեզ**

Զգույշ յեղիր դու, քաջըդ Սեյավուշ,
Քեզ կը հոշոտեն Նրանք վաղ կամ ուշ։

(Աղջիկները կերակուր յեվ գինի են բերում: Նույն պահին դրսից լսվում է աղմուկ)

**Ցալչըն**

Ե՛լ բավական է, թո՛ղ տրվի պատիժ
Այդ գողին անխիղճ։

**Ալբայ**

Լիրբ դավաճանը ուր էլ որ փախչի,
Փրկություն չունի։

(Ալբայը յեվ Ցալչընը, ժողովրդի հետ միասին, իրենց բռնոտած Վալիի յեվ խորհրդականին բերում են ներս)

**Սեյավուշ**

Ի՞նչ է պատահել։

**Ալբայ**

Արարածներն այս ստոր



Փորձել են փախչել։

**Ցալչըն**

(Վերեվից վար Վալիին նայելով)

Թշվառականն, սրիկքեր։

**Սեյավուշ**

Կացե՛ք։

**Ալբայ**

Պետք է կախ տալ այս դավաճաններին։

**Ժողովուրդը**

— Կախեցե՛ք…
— Կախեցեք…

**Ալբայ**

(Վալիին)

Դու, կատաղած շուն։

**Վալի**

(Սեյավուշի ոտները ընկնելով)

Ինձ բավական է մի տարի պատիժ,
Մի՛ լինիք անխիղճ։

**Սեյավուշ**

…

Յերբե՛ք։

**Կերսիվեզ**

Նրանց [ինձ] բաշխի՛ր, քաջըդ Սեյավուշ։

**Սեյավուշ**

Ներված անգութը ստանում է ուժ,

Ցեվ փորում է նա շիրիմ խորախոր
Թշվառի համար արդեն վիրավոր։

**Կերսիվեզ**

(Սեյավուշին)

Նրանց պատիժը մեզ հանձնարարիր։

**Ֆիրենկիզ**

Հորեղբորս խոսքը գետին մի գցիր։

**Սեյավուշ**

Թե մի վիրավոր վրիժառու ոձ
Հանկարծ մնա վողջ…

**Տայչըն**

Վոչ, չի կարելի։

**Ալբայ**

(Տայչընին)

Կապեցեք թևերն այս կատաղածների։

**Կերսիվեզ**

Վաղը խագանին կը ներկայանան,
Անլուր, աննման պատիժ կստանան,
Որենքի առաջ խաբ ու խայտառակ։

**Ալբայ**

Վոչ, մի հավատաք։

**Ֆիրենկիզ**

(Սեյավուշին)

Ալթային լռեցրեք։



**Սեյավուշ**

Հայդե՛։

**Տայչըն**

Խագանն էլ նրանց թայն է, իմացե՛ք։

**Ալբայ**

Սեյավուշն էլ է սերունդն հերազանց
Խագանի, շահի, ինքը պայազատ,
Գործածում է նա ամեն մի մարդու
Առանձին լեզու։

(Գնում են)

**Կերսիվեզ**

(Սեյավուշի ձեռը սեղմելով)

Ինձ չմերժեցիր խալխի մեջ, կեցցես,
Այդ դավաճանին վողջ չեմ թողնի յես։

(Նաժիշտները լցնում են բաժակները)

**Ֆիրենկիզ**

(Իր լցրած մեծ բաժակը տալիս է Կերսիվեզին)

Հոգնած եք, ըմպեք գինուց անապակ։

**Սեյավուշ**

(Նաժիշտին)

Ուր է, կանչիր դա չին պատվիրակը։

**Առաջին նաժիշտ**

(Դեպի դուռը նայելով)

Ցեկան։

**Սեյավուշ**

*Համեցեք։*

(Լավ հագնված Քոսակը ու Բեհրամը միասին մտնում են յեվ նստում)

**Ֆիրենկիզ**

(Կերշիվեզին Քոսակին է ծանոթացնում)

*Մեր հորեղբայրն ահա։*

**Քոսակ**

(Կերշիվեզին)

*Գոհացրեց մեզ*
*Ձեր գալուստն այսպես։*

**Սեյավուշ**

(Բաժակը բարձրացնելով)

*Կերշիվեզը կեցցե։*

**Բեհրամ**

(Խմելով)

*Կեցցե, բյուր կեցցե։*

**Կերշիվեզ**

*Շնորհակալ եմ։*

(Փառուհին ներս է մտնում)

*Այս ով է։*

**Ֆիրենկիզ**

(Ծիծաղելով)

*Նազանք մի հրե։*



**Քոսակ**

*Անզուգ մարգարիտ մեր սարայում չին,*
*Թե պարող է թե յերգիչ առաջին։*

**Կերշիվեզ**

(Ֆիրենկիզին նայելով)

*Մեր խնդրին խառնվի թող նոր խնդություն։*

**Ֆիրենկիզ**

(Փառուհուն)

*Քնածը զարթնի ձայնովդ ճռվողուն։*

(Կերշիվեզը դարձյալ խմում է)

**Փառուհի**

(Թե յերգում է՝ թե պարում)

*Իմ մայրն ինձ ծնեց մի մութ աշխարհում,*
*Յերբ դևն ու աստվածն էյին համբուրվում։*
*Այն օրից ի վեր իմ սև աչքերում*
*Կա պչրանք արբշիռ ու ժպիտ շողուն։*
*Յերբ լաց եմ լինում, դեմքս է ծիծաղուն,*
*Յերբ ծիծաղում եմ՝ լաց կա իմ հոգում։*
*Ուզում եմ բոլոր սրտերը արբուն*
*Լցվեն իմ սիրով, լինեն ակաղձուն։*
*Յար չեմ ուզում, այլ գերի սողոսկուն։*

Փառուհին հեռանում է։ Կերշիվեզը խորը հառաչում է։

**Սեյավուշ**

*Ինչու ես այդպես հառաչում, ինչու։*

**Կերչիվեզ**

*Դահիճին հարցրու։*

(Ձեռք պինդ խփելով սեղանին)

*Վո՛չ, վո՛չ, այդ դեմ է իմ ազնիվ խղճին։*

**Սեյավուշ**

*Ի՞նչ յեղավ, ի՞նչ խիղճ։*

**Կերչիվեզ**

*Վոչինչ...*

**Սեյավուշ**

*Ո՞ւմ դեմ է ուղղված ցասումն այդ հիմար։*

**Ֆիրենկիզ**

*Վալիի՞ համար։*

**Կերչիվեզ**

*Մի հարցնեք թե ում։*

**Սեյավուշ**

*Ինչու։*

**Կերչիվեզ**

*Մի սին արարած Վալին նրա մոտ։*

**Սեյավուշ**

*Ո՞վ է ... Ավելի՞ մի մարդ արհավրատ։*

**Կերչիվեզ**

*Ձեռք քաշի՛ր։*



*Բոցե ալիքներ ուղեղս են այրում*
*Վոչինչ չի մարի զայրույթն իմ յեռուն։*

**Սեյավուշ**

*Հոգնած եք, պառկե՛ք և հանգստացեք։*

**Կերչիվեզ**

(Թեվերը տանում է Սեյավուշի վզին)

*Վո՛չ վոք չիմացավ, ափսո՜ս, քո արժեքն։*

Սեյավուշը յեվ Կերչիվեզը գնում են կողքի սեն ակը։

**Ֆիրենկիզ**

(Բեհրամին)

*Ծիծաղելի վիճակում*
*Նա միշտ է լինում,*
*Յերբ մի բաժակ խմի նա*
*Ահազանգ կտա։*

**Բեհրամ**

*Վո՛չ, այս հուզմունքը առանց հիմքի չէ։*

(Բոլորը դուրս են գնում, մնում են Քոսակն ու պարուհին).

**Քոսակ**

(Անձկագին մոտենում է պարուհուն)

*Ժամանակն է, տո՛ւր*
*Թույնը մահացու։*

**Պարուհի**

*Կորցրել եմ ճամբին։*

**Քոսակ**

*Սուտ ես խոսում, սի՛ն։*

**Պարուհի**

(Գրպանները ցույց տալով)

Չկա, հավատա։

**Քոսակ**

Դուրս հանիր թույնը ու փախուստ մի տար։

(Խուզարկում է գրպանները յեվ կոկորդից բռնում։ Նույն պահին դռան արանքից յերեվում է Փիրենկիզը յեվ լսում)

**Պարուհի**

(Փաթաթված մի թուղթ է տալիս)

Ա՛ռ, Սյուզարքեյի այս խարդախությամբ
Դու էլ կը կորչես, չես էլ իրավամբ։

**Քոսակ**

(Թուղթը բանալով, ծիծաղում է)

Սա մի թույն է նախ՝ խնդացնում է,
Խնդացնում է ու սպանում է։
Սա Սեյավուշի գինու գավն է ջինջ,
Մեզանից նրան չերկար, քաղցըր նինջ։

**Պարուհի**

(Հուզված)

Բոլորը նա է—Սյուզարքեն խաբված...

**Քոսակ**

(Ուշագնաց լինելու մոտ պարուհուն թեվից բռնելով ուզում է սենյակից դուրս հանել)

Յեկ, բավ է, լուռ կաց։



**Պարուհի**

(Թունավոր բաժակն առնելով գետին է խփում)

Դագաղն այս թունոտ պետք է փշրվի։

**Քոսակ**

(Բարկությամբ)

Սիրահարվեցի՞ր դու Սեյավուշին։

**Պարուհի**

Դու ինչ ես. ահա
Մի կոճղ անզգա։

**Քոսակ**

(Գրպանից մի փոքր դաշույն հանելով)

Տես, այս դաշույնը
Ավելի հատու
Գործիք է մահու,
Քան թե այն թույնը։

**Պարուհի**

(Ձեռից դաշույնը խլելով)

Դու սնուցվել ես գազանի կաթով։

**Քոսակ**

(Ճգնում է դաշույնը խլել)

Տուր դաշույնն ինձ, թող։

**Պարուհի**

Խղճուկ դու տխմար,
Այդպես հերոսին պատճառել վնաս,
Զգույշ կաց, տհաս։

**Քոսակ**

*Տո՛ւր, ասում եմ քեզ....*

(Ուզում է դաշույնը խլել)

**Պարուհի**

*Ո՛չ։*

(Նետելով դաշույնը յետ)

**Քոսակ**

(Աղջկան բռնելով փորձում է խեղդել)

*Տո՛ւր։*

**Պարուհի**

(Սուր ճչով)

*Թո՛ղ, թո՛ղ...*

**Քոսակ**

*Տուր դաշույնը ինձ։*

**Ֆիրենկիզ**

(Վերցնելով դաշույնը գետնից՝ խրում է Քոսակի կուրծքը)

*Ահա դաշույնը, պիղծ։*

**Քոսակ**

(Ընկնում է)

*Թեկուզ ես մեռնեմ ձեզ չկա փրկանք։*

**Ֆիրենկիզ**

*Լռի՛ր, դու անարգ։*



**Սեյավուշ**

(Մտնում է ներքինիների հետ միասին)

*Ի՞նչ է պատահել։*

**Ֆիրենկիզ**

*Սա անխիղճ մարդ է*
*Յեվ Չինից յեկած պատվիրակ էլ չէ...*

**Պարուհի**

*Նրան ուղարկեց Սյուդաբեն հիմար*
*Քո կյանքի համար։*

**Սեյավուշ**

*Առանց կասկածի*
*Կա պատճառ գաղտնի։*

**Պարուհի**

(Ցույց տալով)

*Թունավորված են, պիտի զգույշ լինել,*
*Գավաթն էլ, դաշույնն էլ։*

**Ֆիրենկիզ**

*Յերբ ուզում էր խանգարել*
*Քո կյանքն ուրախ, անարգել,*
*Ֆիրենկիզից ստացավ*
*Վարձատրությունը անբավ։*

**Սեյավուշ**

(Պարուհուն դիտելով)

*Այս աղջիկն էլ անկասկած*
*Նրա ընկերն անձնուրաց։*

**Պարուհի**

*Մեղսակցությունը, սակայն, չհանդգեց*
*Անարգ, մահացու վախճանին նսեմ,*
*Մենք յեկել եյինք սպանելու քեզ,*
*Միտքս ինչու հանկարծ փոխվեց, չգիտեմ։*

**Սեյավուշ**

*Ասա ինձ, ինչու։*

**Պարուհի**

*Յերբեք մի հարցնեք, կորցրել եմ իմ չուն,*
*Նոր վերքեր մի տաք տանջվող իմ հոգուն։*
*Յես սարայներին ծախվեցի մանկուց*
*Նետվեցի դես դեն նման քամուն փուճ,*
*Վրեժի ճամբին քեզնից գերվեցա,*
*Բայց թշվառներից ոգնական գտա։*

(Մեռելը ցույց տալով)

*Այս ստորը քեզ ուզում եր խփել*
*Յես յեղա արգել։*

**Բեհրամ**

*Կեցցե՜ս։*

**Ֆիրենկիզ**

*Աղջիկը չկար թե չհասնեյի յես։*

(Պարուհուն գրկում, համբուրում է)

*Ամբողջ իմ հոգով յես սիրեցի քեզ։*

(Նաժիշտներին)

*Տարե՛ք, հանգստանա, տառապեց նա շատ,*



*Նա շողեց բախտը մեր մշուշապատ։*

(Պարուհուն տանում են)

**Սեյավուշ**

(Շրջապատողներին)

*Այս լեշն էլ տարե՛ք։*

(Վերցնում են)

*Ի՜նչ սարսափ ... Յեթե*
*Վրեժն ու դավեր արար աշխարհի,*
*Բոլոր կրքերը լինեյին հղի՝*
*Կծնվեր աղետ, անունը—Սյուդաբե։*

**Կերսիվեզ**

(Խորը ախ քաշելով)

*Իսկապես շատ վատ բախտ ես ունեցել,*
*Չգիտեմ վո՞ր որը աշխարհ ես յեկել,*
*Այն ժամի՞ն, յերբ մութն ու լույսը իրար*
*Խառնըվում են ու մղում են պայքար։*
*Միայն Սյուդաբեն ճամբից չի շեղվել,*
*Եֆրասյաբն էլ—ավելի ահեղ։*

**Սեյավուշ**

*Ի՞նչ եմ արել յես նրան*
*Մի հանելուկ, զարմանք բան։*

**Կերսիվեզ**

*Ասում է՝ աչք է տնկել*
*Թագիս, գահիս ու ինձ էլ։*

**Ֆիրենկիզ**

*Սեյավուշը։*

**Պարուհի**

*Մեղսակցությունը, սակայն, չհանգեց*
*Անարգ, մահացու վախճանին նսեմ,*
*Մենք յեկել եյինք սպանելու քեզ,*
*Միտքս ինչու հանկարծ փոխվեց, չգիտեմ։*

**Սեյավուշ**

*Ասա ինձ, ինչու։*

**Պարուհի**

*Յերբեք մի հարցնեք, կորցրել եմ իմ չուն,*
*Նոր վերքեր մի տաք տանջվող իմ հոգուն։*
*Յես սարայներին ծախվեցի մանկուց*
*Նետվեցի դես դեն նման քամուն փուճ,*
*Վրեժի ճամբին քեզնից գերվեցա,*
*Բայց թշվառներից ոգնական գտա։*

(Մեռելը ցույց տալով)

*Այս ստորը քեզ ուզում եր խփել*
*Յես չթողա արգել։*

**Բեհրամ**

*Կեցցե՛ս։*

**Ֆիրենկիզ**

*Աղջիկը չկար թե չհասնեյի յես։*

(Պարուհուն գրկում, համբուրում է)

*Ամբողջ իմ հոգով յես սիրեցի քեզ։*

(Նաժիշներին)

*Տարե՛ք, հանգստանա, տառապեց նա շատ,*



*Նա շողեց բախտը մեր մշուշապատ։*

(Պարուհուն տանում են)

**Սեյավուշ**

(Շրջապատողներին)

*Այս լեշն ել տարե՛ք։*

(Վերցնում են)

*Ի՞նչ սարսափ ... Յեթե*
*Վրեժն ու դավեր արար աշխարհի,*
*Բոլոր կրքերը լինեյին հղի՝*
*Կծնվեր աղետ, անունը—Սյուդաբե։*

**Գերշիվեզ**

(Խորը ախ քաշելով)

*Ինչպես շատ վատ բախտ ես ունեցել,*
*Չգիտեմ վո՞ր որը աշխարհ ես յեկել,*
*Այն ժամի՞ն, յերբ մութն ու լույսը իրար*
*Խառնըվում են ու մղում են պայքար։*
*Միայն Սյուդաբեն ճամբից չի շեղվել,*
*Եփրասյաբն ել—ավելի ահեղ։*

**Սեյավուշ**

*Ի՞նչ եմ արել յես նրան*
*Մի հանելուկ, զարմանք բան։*

**Գերշիվեզ**

*Ասում ե՝ աչք ե տնկել*
*Թագիս, գահիս ու ինձ ել։*

**Ֆիրենկիզ**

*Սեյավուշը։*

**Կերշիվեզ**

*Քո աչքի լույսը։*

**Սեյավուշ**

*Պիղծ զրպարտություն։*

**Կերշիվեզ**

*Ասում են՝ նա դեմ է գնում*
*Որենքներին, վոր կան հնում։*

**Սեյավուշ**

*Վ՞ր որենքներին։*

**Կերշիվեզ**

*Ո՞վ է իմանում։*

**Սեյավուշ**

*Անօրեն ուղին յերբեք չենք ծավում։*

**Կերշիվեզ**

*Այս կասկածը քեզ թող չի խռովի,*
*Սեյավուշում չկա վոչ մի հետք դավի։*

(Մյուս սենյակն է գնում)

**Սեյավուշ**

*Մինչև չգնամ Եփրասյաբի մոտ*
*Չի վերանա այս սադրանքն անամոթ։*

**Ֆիրենկիզ**

*Զգույշ, յեթե նա մի քիչ կասկածի,*
*Վոչ թե միայն քեզ, չի խնայի վոչ վոքի։*



**Սեյավուշ**

*Յես չեմ հանդուրժում զրպարտանքն այս ցած,*
*Փոքր արատն իսկ ինձ մահ է ամոթխած։*

(Զղայնացած յեվ հուզված)

*Ո՞ւմ հավատամ յես։ Աշխարհը՝ վոսոխ*
*Ինձ դեմ տածում է ատելություն, վոխ։*
*Իրանը դավի, նենգության օջախ,*
*Թուրանը ահի մի գիրկ է, ավաղ։*
*Յեթե Չին գնամ—ավելի անգութ,*
*Չէ վոր վորդերը սարայների մութ*
*Չեն ապրում յերբեք առանց արյունի։*
*Ո՜, անեծք նրանց, ել չեմ հարմարվի*
*Աղամանդաշող թագերին արնոտ։*

**Վարագույր**

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

Լեռան ստորոտում մի դաշտ: Սարքված են 2—3 վրաններ: Իրիկնադեմ: Ամպամած օդ: Չորս կողմում ժայռեր: Վրանի առաջ են կանգնած Վալին, խորհրդականը յեվ Թոսունը զինվորական համազգեստով, զրույց են անում: Մի քանի զինվորներ պահակ են կանգնած, մի քանիսը յերթեվեկում են չորս կողմը ստուգելով:

**Վալի**

(Քինոտ քայլերով յերթեվեկում է)

*Ո՜, Սեյավուշ քաջդ անխիղճ,*
*Ի՞նչ կարծեցիր արդյոք ինձ.*
*Մի որ յերկաթյա բազուկները հաղթ*
*Քեզ կտոր-կտոր կանեն, դիտապաստ։*

**Խորհրդական**

*Թե Կերշիվեզը չլիներ մեր առաջ*
*Առանց կասկածի մենք կորած եյինք,*
*Ցեվ մյուս աշխարհում խնճույքի նստած։*

**Վալի**

*Հավատա, քանի վողջ է վաթանի*
*Այս դավաճանը,*
*Չի մարի յերբեք մեր Եփրասյաբի*
*Վոխավառ ջահը։*



**Խորհրդական**

*Ասում են՝ վախից*
*Փախել է արդեն*
*Չինաստան դրկից։*

**Թոսուն**

*Բոլորը սուտ է։*

**Վալի**

*Վոչ, նա վախկոտ չէ։*

**Խորհրդական**

*Բայց նենգամիտ է։*

**Թոսուն**

(Մեկուսի)

*Բոլոր այս սուտը, խարդախությունը*
*Սարքում է միայն փուճ Կերշիվեզը։*

(Նրանց)

*Վոչ, դավաճան չէ մեր Սեյավուշը։*

**Խորհրդական**

*Ստրճուկ սատանա։*

**Վալի**

(Զինվորներին)

*Հսկեցեք ճամբան, մոլորվածը այն*
*Ուր ել վոր լինի՝ այստեղից միայն*
*Պետք է վոր անցնի, շուրջ կալեք նրան։*

**Խորհրդական**

*Թեկուզ բարձրանա*
*Ամպերի վրա՝*
*Փրկություն չկա։*

(3—4 զինվորի հետ հեռանում է)

**Թոռուն**

(Մեկուսի)

*Ի՞նչ հետաքրքրական,*
*Յերբ աղվեսները արշավ են գործում*
*Առյուծի վրա։*

(Նույն պահին վորոտ, փայլատակում են կայծակները)

**Վալի**

*Խրխնջում են շանթերը,*
*Սուր են քաշում ամպերը,*
*Թագավորության մեջ յերկինքների*
*Կռիվ կա արդյոք, խրոխտ ամեհի։*

**Ռյուբաբե**

(Ինքը ծպտված, իսկ սպասյակը վաճառականի տարազ հագած՝ մտնում են։ Դառն ճիչով)

*Ա՜խ, ամա՜ն...*

**Թոռուն**

*Ի՞նչ է յեղել, կնա՞ց։*

**Ռյուբաբե**

*Արար աշխարհը սարսափ է պատած,*
*Մենք ճամբորդներ ենք այստեղ մոլորված,*
*Չենք կարող անցնել ճամբան անվնաս։*



**Սպասյակ**

*Ո՞ւր ենք գտնվում,*
*Այս ճամբաները մեզ ո՞ւր են տանում։*

**Թոռուն**

*Այս ճանապարհը Չինաստան դեպի,*
*Այս էլ—յերկիրը մեծ Եֆրասյաբի։*

(Շեփոր։ Կերշիվեզը ներս է մտնում մի քանի մարտիկների հետ)

**Ռյուբաբե**

*Ո՞վ է յեկողը։*

**Թոռուն**

*Կերշիվեզը։*

(Ընկերներին)

*Պատրաստ, բարև տուր։*

(Քաշում են սրերը ի նշան հարգանքի)

**Սպասյակ**

(Խոնարհելով բարևում է։ Ռյուբաբեն ծանոթացնում է Կերշիվեզին)

*Տեր իմ, կինն այս խեղճ*
*Ուզում է տեսնել ձեզ։*

**Կերշիվեզ**

*Վորտեղացի եք,*
*Յեվ ապա ո՞վ եք։*

**Ռյուբաբե**

*Քեյքյավուսից պատվիրակ,*
*Յեվ նրանից էլ նամակ։*

**Կերշիվեգ**

Այդպես։ Խոշ յեկաք։

(Մի կողմ քաշվելով կարդում է նամակը)

Ուրախությունն իմ սրտի, պողպատակուռ
Սեյավուշ,
Պատրաստ յեղիր, ահիթն է, յեղիր արթուն և
զգույշ,
Դու մի կողմից հարձակվիր, Չին խագանը՝
մյուս կողմից,
Զալի վորդին ու Թուսը սուրալու են Իրանից,
Փոշի դարձրեք Թուրանը, թող բանակը ճզմըվի,
Եփրասյաբը, յես տեսնեմ, շղթայակապ թող
բերվի։

Ստորագրություն—հայրդ՝ Քեյքյավուս

(Դիվային քրքիջով)

Սա դուր յեկավ իմ սրտին։

(Թուսին)

Պատիվ տվեք մեր հյուրերին այս անգին։

**Թուսը**

(Սառնությամբ)

Հրամմեցեք, եփենդիմ։

(Յերկուսին էլ տանում է վրան: Չորս կողմից լսվում է փողերի ձայն)

**Եփրասյաբ**

(Ներս է մտնում Փիրանի հետ)

Վրաններն ինչու այստեղ են սարքված։



**Փիրան**

Ճանապարհը յերկար է,
Յեվ զինվորներն էլ հոգնած։

**Եփրասյաբ**

Սեյավուշն, զգույշ, ձեռքից չփախչի,
Հետո մեր գլխին փորձանք կը բերի։

**Կերշիվեգ**

Բոլոր կողմերից կտրած է ճամբան,
Այդ մոլորվածին վոչ մի յելք չկա։

**Եփրասյաբ**

Ով մոլորվածին այդ բռնի գերի
Պարգև կստանա—ինչ էլ վոր ուզի։

**Փիրան**

Քաջ Սեյավուշին կոչել մոլորված,
Ուղիղ է ասված։

(Չինաստանի ճանապարհն է նայում զարմանքով)

Այն ով է։
Սեյավուշն է։
Իսկապես նա է։

**Եփրասյաբ**

Ահա հենց ինքն է։ Ստոր, անամոթ։

**Կերշիվեգ**

Աջից Բեհրամն է, ձախից՝ Զիրենկիզ։

**Եֆրասյաբ**

Թող հանգստանա մի քիչ վրանում,
Դավաճաններին պատիժ անպատում։

**Փիրան**

Վոչ մի ժամանակ, թե նոր և թե հին,
Վտանգ չի կարող լինել արդարին։

(Դուրս են գնում)

**Կերսիվեզ**

(Հեգնական ծիծաղով, մեկուսի)

Հուսախաբությամբ յերազն այդ անուշ
Կը վոչնչանա՝ լինի վաղ կամ ուշ,
Այո, հեռու չէ, զվարճացիր, բերկրիր,
Թե գլխավորը, թե դու, ով վեզիր։

**Եֆրասյաբ**

Իմ կարծիքով հանցանք չունի
Այն փառապանծ զինվորն արի։

**Կերսիվեզ**

Թող չխաբեն քեզ յերգերը սիրուն,
Դեռևս չի հանգել խռովքը սարում,
Ալթայն իր մտքից դեռ չի հրաժարվել։
Գյուղերը բոլոր միանում շտապ,
Նրա բանակը ստանում է թափ,
Սեյավուշի ձեռն Ալթային հասնի՝
Կենթարկի նա մեզ ահռելի կռվի։
Քեյքյավուսի մասն խառն է այս բանում,
Ուզում է միանալ Սեյավուշ վորդուն։



**Եֆրասյաբ**

Վոչ, Սեյավուշը խարդավանք չունի։

**Կերսիվեզ**

(Հեգնական ակնարկով)

Հեքիաթներ շատ կան լարերում սազի։

**Եֆրասյաբ**

Բավ է, ո՛, բավ է, արդեն ձանձրացանք։

**Կերսիվեզ**

Խոտը բսնում է արմատի վրա։

**Եֆրասյաբ**

Չեմ հավատում յես, նա դավաճան չէ։

**Կերսիվեզ**

(Տալիս է նամակը)

Կարդա, դա ամեն գաղտնիք պարզում է։

**Եֆրասյաբ**

(Կարդալով ցնցվում է)

«Պողպատակուռ Սեյավուշ . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . .
Դու մի կողմից հարձակվիր, . . . . . . .
Զալի վորդին ու Թուսը սուրալու են Իրանից,
. . . . . Թուրանը, թող բանակը . . . .
Եֆրասյաբը . . . . . շղթայակապ . . .»
Ի՞նչ սարսափ...

**Կերսիվեզ**

Ցավ ի՜նչ թափ...

**ԱՖՐԱՍՅԱԲ**

*Այս դավադրանքը տանելու բան չէ։*

(Թոսունին)

*Կանչիր շուտ այստեղ այդ մոլորվածին*
*Յեվ թող պատասխան տա մեր հարցերին։*

**ԹՈՍՈՒՆ**

*Ծառա եմ։*

(Մտնում է վրանը)

**ԱՖՐԱՍՅԱԲ**

(Կերսիվեզին)

*Յեթե գտնվեց մի քիչ մեղավոր՝*
*Իսկույն նետել նրան բանտը մութ ու խոր,*
*Յեվ մի պատրվակ ստեղծիր թագուն,*
*Գլուխը մարմնից բաժանիր իսկույն։*

(Նամակը ձեռի մեջ ճմռթելով)

*Քո արդար խոսքին նախ չհավատացի յես,*
*Յեվ չկարծեցի նրան մի լրտես։*

(Ներս են բերում Սեյավուշին)

**ՖԻՐԵՆԿԻԶ**

*Հայր իմ սիրելի։*

**ԱՖՐԱՍՅԱԲ**

*Մի՛ մոտենա։*

(Խիստ զայրույթով նրան յեվ Սեյավուշին)

*Թե դու, թե նա թշնամի եք իմ թագին։*



**ՖԻՐԵՆԿԻԶ**

*Մենք։*

**ԱՖՐԱՍՅԱԲ**

*Ձեր արարքն է նենգ,*
*Մեղք աններելի,*
*Արի՛, մոտ արի՛։*

**ՍԵՅԱՎՈՒՇ**

*Ձեր հրամանին։*

**ԱՖՐԱՍՅԱԲ**

*Ահա մի նամակ քեզ հույժ թանկագին,*
*Հայրըդ կանչել է քեզ վաթանը հին։*

**ՍԵՅԱՎՈՒՇ**

*Մի դրախտ լինի Իրանը թեկուզ,*
*Վոտք կոխել այնտեղ յես չեմ ցանկանում։*
*Թե Հինդ անտառում վագրերի ընկեր,*
*Կամ Հիմալայի բարձունքներում լերկ*
*Յեղբայրանամ յես արծիվների ծեր,*
*Կամ նետվեմ գիրկը կոկորդիլոսի*
*Կրծքին ափերին վարար Նեղոսի—*
*Ավելի լավ է ... Բայց յես չեմ ընկնի*
*Իրանի նման վոստայնը սարդի,*
*Սյուդաբեն սնող յերկրին այդ չվառ*
*Յես չեմ մոտենա, ազնիվ խոսքըս առ։*

**ԱՖՐԱՍՅԱԲ**

*Յեթե այդպես է՝ տամ բանակ հզոր,*

Գնա, ավերիր Իրանը վոսոխ,
Քեյանի շահին դարձրու մի ճորտ։

**Սեյավուշ**

Վոչ, ստորանալ յես չեմ ցանկանում,
Թեկուզ ինքն ուզի ստորին լինել,
Թե հոսեցնի իմ իսկ արյունն ել,
Վրեժ լուծել, վոչ, յես չեմ ցանկանում։

**Եֆրասյաբ**

(Հեգնական)

Ձեր մեջ կապեր կան անքակտելի, մութ,
Կարդա նամակն այս, տես յերազն անգութ։

(Նամակը տալիս ե Սեյավուշին։ Սեյավուշը կարդում ե)

**Կերշիվեզ**

(Եֆրասյաբին մոտենալով յեվ հեգնանքով)

Մեր հերոսը պատվական
Քաղաքական միտք ունի,
Իսկույն կտա պատասխան,
Հանգույցից դուրս կը պրծնի։

**Սեյավուշ**

(Հուզված)

Ահա ինձ համար մահվան մի վճիռ,
Սյուդաբեյի նոր զրպարտանքը լիրբ։

**Եֆրասյաբ**

Ո՞վ ե գրել։ Սյուդաբե՞ն։



**Սեյավուշ**

Վոչ, Քեյքյավուսը։

**Կերշիվեզ**

Գաղտնի հնարքներն զուր անցան, ափսոս։

**Սեյավուշ**

(Զղայնացած)

Կերշիվեզ, դու ել լեզուդ բաց արիր
Ինձ դեմ ու խիղճը վոտնատակ արիր։

**Եֆրասյաբ**

Լռիր, չեմ ների յեղբորս անպատվես,
Ստել չգիտե Կերշիվեզը վես։

**Սեյավուշ**

Իրավունք ունի, հասկացա բանը,
Միամիտին ընկերն ե հիմարն անբան։

(Կերշիվեզին)

Թե յես լինեյի նենգամիտ, խարդախ,
Անզեն, անբանակ չեյի գա, ավաղ։
Յես հմայվեցի քո քաղցր լեզվից,
Մի խնայիր ինչ կգա քո ձեռքից։

**Եֆրասյաբ**

Բավ ե, շփացավ, լռեցրեք լեզուն,
Յեվ կապկպեցեք թեվերը իսկույն։

**Ֆիրենկիզ**

(Հորն առաջ ծունկի չոքելով)

Գթացեք։

### Սեյավուշ

(Իրեն բռնել ուզողներին)

Կացե՛ք։

### Ֆիրենկիզ

Վողորմեցե՛ք նրան,
Նա չէ դավաճան։

### Սեյավուշ

Մի՛ տանջվիր—խնդրիր, իմ հոգի, իմ ջան։

### Աֆրասիաբ

(Աղջկա թեվից բռնելով հրում է)

Դու մի մոտենա։

### Սեյավուշ

Օ՜, Թշվառ...
Անեծք այն որին, վոր քեզ հուսացի,
Նողկանք արյունոտ խագանին լկտի։
Եկա նետելով Քեյանի թագը
(Ֆիրենկիզը ցույց տալով)
Այս լույս աղջըկան արի իմ փառքը՝
Չիմացա, վոր հորս ուղեղի նման
Քո ուղեղումն էլ շատ կարիճներ կան։
Հանցանք է, ավա՜, կորստի մատնված
Երկիրդ փրկեցի սովից սևակնած։
(Վալիին յեվ խորհրդականը ցույց տալով)
Վրեժ լուծեցի բռնակալներից,
Չիմացա՝ դրանից հուզվել է քեռիս։



Այո, չիմացա գլուխները մութ
Ծափահարում են անարդարին դուժ։
Հաճելի՞ են քեզ խալխի վողբըն ու ճիչ։
Ա՜խ, հայրս էլ դահիճ, դու էլ մի դահիճ։

### Աֆրասիաբ

Հեռացրե՛ք շուտով, նրան չտեսնեմ։

### Սեյավուշ

Ահա դուք ու յես ... Ասելիք չունեմ։

(Զինվորները դուրս են տանում Սեյավուշին)

### Ֆիրենկիզ

(Հորը)

Արդյոք քո հոգին չունի՞ վոչ մի լույս։

(Սեյավուշին)

Ախ, մի՛ գնա, կա՛ց, իմ Սեյավուշ։

(Դուրս են գնում)

### Քեհրամ

Ահա իմ վիզը, սուրը, ո՜վ խագան,
Քեզ՝ իմ արյունը, ազատիր նրան։

### Աֆրասիաբ

Յես դավաճանին կը պատժեմ մահվամբ։

### Փիրան

Զգույշ, ո՜վ խագան, հերոսին այդպես
Թե չը խնայես, կը վիրավորես
Աշխարհը արար, հիշելով նրան
Կը դատապարտեն Թուրանը համայն։

Մի յերիտասարդ

(Ներս է մտնում ստայով)

*Սարսափ… վոչ վոքի նա չի յենթարկվում։*

Ափրասյաբ

*Սեյավուշը։*

Յերիտասարդ

*Այո։ Չի հանձնվում։*

Կերսիվեզ

*Ահա, նա, փոխված կատաղած մի վագրի,*
*Զարնում է, խփում աջ, ձախ, ամեն դի։*

(Ուժեղ նվագ… Կովի ձայն ու աղմուկ։ Ներս է մտնում Սեյավուշը մերկացրած սրով, հարձակվում է փախուստի դիմող Վալիի յեվ խորհրդականի վրա։ Նրան շրջապատում են ուրիշ մարտիկներ։ Սուսի յեվ Ծիզակի նետկանյունը հնչում է ամեն կողմ։ Բեհրամն էլ սուր քաշած ոգնում է Սեյավուշին)

Ափրասյաբ

*Մի խնայեք, զարկեցեք,*
*Անմիջապես լռեցրեք։*

Սեյավուշ

*Ա՛ռ այս քեզ…*

(Վիրավորում է Վալիին)

Կերսիվեզ

(Ներկաներին)

*Կապ ավեք։*



Փիրան

*Վա՜յ, ամա՜ն, կացեք։*

Կերսիվեզ

*Տե՛ս, այսպես…*

(Խփում է յետևից)

Սեյավուշ

(Վայր է ընկնում)

*Սուր, արարած դու վողորմելի։*

Ափրասյաբ

*Պատիժը այս է նենգ դավաճանի։*

Կերսիվեզ

*Ընկավ վերջապես վարդը հաղթության։*

Սեյավուշ

*Քեզնից հարգի են շները վորսկան։*

Ափրասյաբ

*Ափսոս, չոգնեցիր շահ Քեյքյավուսին։*

Սեյավուշ

*Շահ Քեյքյավուսը դահիճ է անխիղճ,*
*Դու էլ մի դահիճ։*

(Լռում է, թևերն ընկնում են ցած)

ՎԵՐՋ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0381818

73 832

ԳԻՆԸ 2 Ռ.

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

Г. Джавид

СЕЯВУШ

Гиз ССР Армении, Ереван, 1936